



Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարումը

Ձեռնարկ ՀԿ-ների, տուժածների և նրանց
իրավախորհրդատուների համար

Ձեռնարկի ոչ պաշտոնական թարգմանությունը կատարվել է 2020թ.-ին Բաց հասարակության հիմնադրամներ-Յայաստանի ֆինանսավորմամբ



Հեղինակային իրավունքները. © 2018 EIN
(2020 թվականի հունվարի լրացումներով հանդերձ)

Վերոգտագործումը թույլատրված է՝ աղբյուրը նշելու պայմանով:

Կազմի լուսանկարը. Եվրոպայի խորհուրդ.
Դիզայնը. Alain Fritsch - Création graphique
Առաջին տպագիր հրատարակությունը. 2018 թ.

Բովանդակություն

Ներածություն.....	2
1. ՄԻԵԴ-ի վճիռների կատարումը, ԵԽ վերահսկողության ընթացակարգը	4
1.1. ԵԽ հիմնական մարմինները և նրանց դերերը	4
1.2. Նախարարների կոմիտեի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակը	5
1.3. Ընթացակարգը	6
1.3.1. Ընդհանուր ընթացակարգը.....	6
1.3.2. Գործերի դասակարգումը. «առաջատար», «կրկնվող» կամ «մեկուսի».....	7
1.3.3. Վերահսկողության երկշերտ համակարգը	8
1.3.4. Նախարարների կոմիտեի նիստերը՝ նվիրված մարդու իրավունքներին.....	9
2. Հասարակական կազմակերպությունների և տուժածների մասնակցությունը	11
2.1. Նախարարների կոմիտեին ներկայացվող գրավոր տեղեկանքները	11
2.1.1. Տուժածի կողմից 9.1 կանոնի համաձայն ներկայացվող տեղեկանքը	12
2.1.2. ՀԿ-ների կողմից 9.2 կանոնի համաձայն ներկայացվող տեղեկանքները	13
2.2. Շահերի պաշտպանության այլ ճանապարհներ Ստրասբուրգում.....	22
3. Ինչպես կարող է օգնել «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպությունը (EIN)	25
4. Կատարման գործիքակազմ ՀԿ-ների համար	26
5. Հավելվածներ	28
5.1. Հավելված 1 – մասնագիտական եզրույթների բառարան.....	28
5.2. Հավելված 2 – ծանոթագրություն HUDOC-EXEC շտեմարանի մասին	32

Ներածություն

Սույն Ձեռնարկը կազմվել է որպես գործնական ռեսուրս ՅԿ-ների, տուժածների և նրանց իրավախորհրդատուների համար, որոնք ցանկանում են ջատագովել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների կատարումը՝ ուղղակիորեն աշխատելով Եվրոպայի խորհրդի (ԵԽ) Նախարարների կոմիտեի (ՆԿ) վերահսկողական գործընթացի հետ, որն հայտնի է որպես «վճիռների կատարման գործընթաց»:

2006 թվականից ի վեր ՆԿ-ի ընթացակարգային կանոնները («ՆԿ կանոններ») ՅԿ-ների համար հնարավորություն են նախատեսում գրավոր տեղեկանքներ ներկայացնելու ի սատարումն մարդու իրավունքներին վերաբերող վճիռների կատարմանը: Այդ մասնակցությամբ վճիռների արդյունավետ կատարմանն աջակցելու ներուժը բավական մեծ է: Առանց ՅԿ-ների ներդրման՝ ՆԿ-ի կողմից կառավարությունից ստացված պատասխանների համարժեքության և նախատեսվող միջոցառումների կատարման արդյունավետության գնահատումը գրեթե ամբողջովին կախված է անդամ պետության տրամադրած տեղեկություններից:

Այնուամենայնիվ, ՅԿ-ները չեն շտապում օգտվել այս հասանելիությունից: ՅԿ-ների կողմից տարեկան ներկայացվում է ընդամենը մոտ 70-ից 90 տեղեկանք՝ 2019 թվականի աշնան դրությամբ քննության ընթացքի մեջ գտնվող մոտ 5,300 գործերի շատ փոքր մասի վերաբերյալ: Այդ գործերից մոտ 1,250-ը ճանաչվել են «առաջատար գործեր», այսինքն՝ գործեր, որոնց շրջանակում հաճախ արձանագրվում են կառուցվածքային և/կամ համակարգային նոր խնդիրներ, ուստի՝ արդյունավետ կատարման համար պահանջվում են ընդհանուր բնույթի նոր միջոցառումներ, մասնավորապես օրինակ՝ իրավական բարեփոխումներ կամ բաղաբաղանդային էական փոփոխություններ: Հիմնական հենց այդ գործերին պետք է վերաբերեն ՅԿ-ների կողմից ներկայացվող տեղեկանքները: ՅԿ-ների տեղեկանքների թիվը կտրուկ հակադրվում է ԵԽ անդամ պետությունների կողմից ներկայացվող գործողությունների ծրագրերի և գործողությունների զեկույցների տարեկան թվին, որը վերջին տարիներին տատանվել է 750-800 միջակայքում:

«Կատարման եվրոպական ցանց» («The European Implementation Network», «EIN») կազմակերպությունն համոզված է, որ ողջ Եվրոպայում ՅԿ-ները կարևորագույն դերակատարում ունեն՝ առաջ մղելու համար ՄԻԵԴ-ի վճիռների լիարժեք և արդյունավետ կատարումը, և որ նրանց ծավալուն ընդգրկումը վճիռների կատարման գործընթացի շրջանակներում այդ դերակատարման կարևորագույն մասերից է: Սույն Ձեռնարկը մեկն է այն միջոցներից, որոնցով «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպությունը ձգտում է ավելացնել ՅԿ-ների ընդգրկվածությունն այս գործընթացին՝ ներկայացվող տեղեկանքների թե՛ որակի, թե՛ քանակի առումներով: Գործելով այս կերպ՝ հուսով ենք օգնել ՅԿ-ներին, որպեսզի նրանք ավելի ակտիվորեն մասնակցեն Եվրոպայում մարդու իրավունքների խթանման և պաշտպանության ընդհանուր գործընթացներին:

Ձեռնարկի առաջին տարբերակը պատրաստվել է 2018 թվականին «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպության թիմի կողմից: Ռամոնտե Ռեմեզայտե, պրոֆեսոր Բաշակ Չալի, պրոֆեսոր Ֆիլիպ Լիչ, Նայջել Կորներ, Դոմինիկա Բիչալսկա-Սինիարսկա և Կեվին Սթիվզ: Լրացումներ են արվել Էն-Քեթրին Սփեքի և Ջորջ Սթենֆորդի կողմից: «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպությունն իր երախտագիտությունն է հայտնում 2018 թվականի առաջին կեսի ընթացքում «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպության անցկացրած վերապատրաստման երկու դասընթացների բոլոր մասնակիցներին, որոնք վերաբերում էին ՆԿ-ի

կողմից վճիռների կատարման գործընթացին: Նրանց ակտիվ մասնակցությունը վերապատրաստման դասընթացներին նպաստել է մեծաթիվ գաղափարների մաշկմանը և սույն ձեռնարկի բովանդակության մշակումներին: «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպությունը շնորհակալություն է հայտնում նաև ՄԻԵԴ-ի վճիռների կատարման վարչության թիվ 2 բաժնի ղեկավար Նիկոլաոս Սիտարոպուլոսին իր առաջարկությունների և լրացումների համար: Այս ձեռնարկի ստեղծումը և դրանում լրացումները հնարավոր չէին լինի առանց «Oak Foundation» հիմնադրամի, «Բաց հասարակության հիմնադրամների» և «Sigrid Rausing Trust» հիմնադրամի օժանդակության: Ձեռնարկն արդեն հասանելի է անգլերեն, ֆրանսերեն, լեհերեն, ռուսերեն, սերբոխորվաթերեն և թուրքերեն:

1. ՄԻԵԴ-ի վճիռների կատարումը. ԵՆ վերահսկողության ընթացակարգը

1.1. ԵՆ հիմնական մարմինները և նրանց դերերը

ԵՆ անդամ պետությունները ՄԻԵԴ-ի վճիռները լիարժեքորեն կատարելու իրավական պարտավորություն ունեն։ Միանալով Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիային (ՄԻԵԿ), անդամ պետությունները պարտավորվել են կատարել ՄԻԵԴ-ի վճիռները և որոշումները, որոնցում արձանագրվում են ՄԻԵԿ-ի խախտումներ (ՄԻԵԿ-ի 46-րդ հոդված)։ Այնուհանդերձ, պետությունները սկզբունքորեն ազատ են վճռի կատարման համար օգտագործվող միջոցի ընտրության հարցում։ Ուստի, կիրառվելիք միջոցները սկզբունքորեն ընտրվում են համապատասխան պետության կողմից։ ՆԿ-ն՝ ԵՆ անդամ 47 պետությունների կառավարությունների ներկայացուցիչներից կազմված միջկառավարական մարմինը ԵՆ համակարգում, օժտված է ՄԻԵԴ-ի վճիռների կատարումը վերահսկելու լիազորությամբ։ Թեպետ ՆԿ-ն պաշտոնապես կազմված է բոլոր անդամ պետությունների արտաքին գործերի նախարարներից, նախարարները գործնականում այդ դերը պատվիրակում են Ստրասբուրգում իրենց մշտական ներկայացուցչություններին։ Ուստի, ՄԻԵԴ-ի վճիռների կատարման վերահսկողությունը սովորաբար իրականացնում են անդամ պետությունների մշտական ներկայացուցիչների տեղակալները։

Վերահսկողական այս լիազորության իրականացման գործում ՆԿ-ին աջակցում են ՆԿ-ի **քարտուղարությունը և ՄԻԵԴ-ի վճիռների կատարման վարչությունը**։ ՆԿ-ի քարտուղարությունը պատասխանատու է ՆԿ-ի անխափան գործունեությունն ապահովելու համար, մասնավորապես՝ նրա որոշումների կայացման ընթացակարգերի մասով (որոշումների կայացման ընթացակարգերից մեկը վերաբերում է ՄԻԵԴ-ի վճիռների կատարման նկատմամբ վերահսկողությանը)։ ՄԻԵԴ-ի վճիռների կատարման վարչությունը (որը բաղկացած է իրավաբաններից և այլ մասնագիտացում ունեցող խորհրդատուներից) սերտորեն աշխատում է անդամ պետությունների հետ՝ որոշելու համար կոնկրետ այն գործողությունները, որոնք պահանջվում են ՄԻԵԴ-ի վճիռների լիարժեք կատարումն ապահովելու համար։ ՄԻԵԴ-ի վճիռների կատարման վարչությունը խորհուրդներ է տալիս ՆԿ-ին անհատական գործերի կատարման վերաբերյալ։ ՄԻԵԴ-ի վճիռների կատարման վարչությունը մտնում է Մարդու իրավունքների և իրավունքի գերիշխանության գլխավոր տնօրինության (DG1) կազմի մեջ։

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՄԿ) **Իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովը**, **Մարդու իրավունքների եվրոպական դատարանի դատավճիռների կատարման հարցերով նրա ենթահանձնաժողովը**, **ՄԻԵԴ-ի վճիռների կատարման հարցերով ԵԽՄԿ-ի զեկուցողը և Մարդու իրավունքների ԵՆ հանձնակատարը** նույնպես որոշակի լիազորություններ ունեն՝ կապված ՄԻԵԴ-ի վճիռների կատարման հետ ([լրացուցիչ քննարկված են ստորև՝ 21-րդ էջին](#))։

1.2. Նախարարների կոմիտեի կողմից իրականացվող վերահսկողության շրջանակը

ՆԿ-ն վերահսկում է ՄԻԵԴ-ի ըստ եռլայան կայացրած վճիռների կատարումը, հաշտության համաձայնություններին վերաբերող որոշումների և գործերը ցանկից ջնջելու մասին վճիռների (համապատասխանաբար ՄԻԵԿ-ի 46-րդ հոդված և 39-րդ հոդվածի 4-րդ մաս և Դատարանի կանոնակարգի թիվ 43 կանոն) կատարումը:

ՄԻԵԿ-ի ներքո՝ անդամ պետություններն իրավաբանորեն պարտավոր են շտկել ՄԻԵԴ-ի արձանագրած խախտումների հետևանքները: Այդ պարտավորությունը գործնականում կատարվում է երկու տեսակի միջոցների իրագործմամբ.

Անհատական միջոցներն ուղղված են տուժած կողմի համար առաջացած հետևանքները լիարժեքորեն վերացնելուն՝ նպատակ ունենալով հնարավորինս վերականգնել խախտումից առաջ գոյություն ունեցած իրավիճակը (այդ սկզբունքը կոչվում է «*restituti in integrum*»): Փոխհատուցման վճարումը (հայտնի է որպես «*just satisfaction*») իրավունքի պաշտպանության՝ առավել հաճախ կիրառվող անհատական միջոցն է, ընդ որում՝ գումարը որոշում է ՄԻԵԴ-ը: Փոխհատուցումը կարող է ներառել թե՛ նյութական վնասը (այսինքն՝ ուղղակի ֆինանսական կորուստները), թե՛ ոչ նյութական (այսինքն՝ բարոյական) վնասը: Անհատական միջոցները ներառում են նաև այլ գործողություններ, օրինակ՝ անարդար քրեական վարույթի վերաբացումը, գույքը վերադարձնելը, ներպետական դատարանների որոշումներն ի կատար ածելը, ապօրինաբար ազատազրկված անձին ազատ արձակելը, անձին նախկին աշխատանքում վերականգնելը և այլք:

Ընդհանուր միջոցները վերաբերում են ապագայում նմանօրինակ խախտումները կանխելուն՝ պետությունների պարտավորության կատարմանը: Դրա համար կարող է անհրաժեշտ լինել ընդունել կամ փոփոխել ներպետական օրենսդրություն, որով կսահմանվի նոր քաղաքականություն կամ ընթացակարգ, կամ ապահովել որոշակի դատական պրակտիկա: Պետություններից կարող է պահանջվել նաև նյութական պայմանների բարելավում (օրինակ՝ կալանավայրերի կամ բանտերի վերանորոգում): Ամփոփ՝ կարելի է ասել, որ ընդհանուր միջոցներն հիմնականում վերաբերում են օրենսդրության, քաղաքականության, պրակտիկայի՝ ներառյալ դատական պրակտիկայի և ազատազրկման ընդհանուր պայմանների ներպետական բարեփոխումներին:

2004 և 2008 թվականներին ՆԿ-ն ընդունեց համապատասխանաբար թիվ (2004)6 երաշխավորությունը *իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման* մասին և թիվ (2008)2 երաշխավորությունը *ՄԻԵԴ-ի վճիռների արագ կատարման համար անհրաժեշտ արդյունավոր ներպետական կարողությունների* մասին՝ անդամ պետություններին կոչ անելով ստեղծել իրավական պաշտպանության արդյունավետ միջոցներ, որպեսզի հնարավոր լինի խուսափել ՄԻԵԴ-ին կրկնվող գործեր ուղարկելուց (լիարժեք հղումների համար տե՛ս ստորև՝ «NGO Implementation Tool Kit»):

1.3. Ընթացակարգը

1.3.1. Ընդհանուր ընթացակարգը

Երբ վճիռը կամ որոշումը վերջնական է դառնում,¹ այն փոխանցվում է ՆԿ-ին՝ կատարման նկատմամբ վերահսկողության համար: Այդ պահից սկսած ՄԻԵԴ-ի յուրաքանչյուր վճռի կատարման մասին տեղեկություն կարելի է գտնել [HUDOC EXEC database](#) տեղեկատվական շտեմարանում (տե՛ս Հավելված 2):

Վճռի վերջնական դառնալուց հետո հնարավորինս արագ, սակայն՝ վճռի վերջնական դառնալուց հետո ոչ ուշ, քան վեցամսյա ժամկետում պատասխանող պետությունը պետք է ներկայացնի **գործողությունների ծրագիր**, որում շարադրված կլինեն այն քայլերը, որոնք արդեն կատարվել են կամ կատարվելու են վճիռը լիարժեքորեն կատարելու համար: Գործողությունների ծրագիրը պետք է պարունակի այն քայլերի մանրակրկիտ թվարկումը, որոնք պետությունը ձեռնարկելու է վճիռը լիարժեքորեն կատարելու համար՝ մոտավոր ժամանակացույցի հետ մեկտեղ: Եթե հնարավոր չէ միանգամից որոշել բոլոր միջոցները, ծրագրում թվարկվում են այն քայլերը, որոնք ձեռնարկվելու են անհրաժեշտ միջոցները պարզելու համար:

Գործողությունների ծրագիրը մշտապես փոփոխվող և լրացվող փաստաթուղթ է: Այն պետք է պարբերաբար թարմացվի և ներառվի ՆԿ-ին ուղարկվող նյութերում՝ պարունակելով թարմ տեղեկություններ ծրագրված միջոցի կատարման առաջընթացի մասին: Այն պետք է նաև վերանայվի, երբ սկզբնապես ծրագրված միջոցն հարկ է վերանայել՝ հաշվի առնելով նոր զարգացումները կամ արձագանքելով ՆԿ-ի ընդունած երաշխավորությունները կամ ՄԻԵԴ-ի վճիռների կատարման վարչության հետ քննարկումները:

Երբ գործողությունների ծրագրում և դրա թարմացված տարբերակներում նկարագրված բոլոր միջոցները կատարված են, պետությունը ներկայացնում է վերջնական թարմացված տարբերակը՝ վերջինս վերածելով **գործողությունների զեկույցի**, որում թվարկվում են ծրագրված բոլոր միջոցները և ձեռնարկված բոլոր գործողությունները, և **ՆԿ-ին առաջարկվում է դադարեցնել գործի նկատմամբ ՆԿ-ի վերահսկողությունը**: Երբ միջոցներ չեն պահանջվում, կամ երբ անհրաժեշտ միջոցներն արդեն կատարվել են ավելի վաղ փուլում, պետությունը միանգամից ներկայացնում է գործողությունների զեկույց:

¹ Հաշվի առնելով, որ գոյություն ունի պալատի վճիռը Մեծ պալատին ներկայացնելու ընթացակարգ, պալատի վճիռը ոչ միանգամից է վերջնական դառնում: Պալատի վճիռը վերջնական է դառնում միայն այն ժամանակ, երբ բավարարված է հետևյալ երեք պայմաններից մեկնումեկը (ՄԻԵԿ-ի 44(2) հոդված)։

1. Երբ կողմերն հայտարարում են, որ չեն ներկայացնելու գործը Մեծ պալատ ուղարկելու մասին միջևորդություն, կամ
2. Վճռի ամսաթվից անցել է երեք ամիս, և չի ներկայացվել գործը Մեծ պալատ ուղարկելու մասին միջևորդություն, կամ
3. Երբ Մեծ պալատի կազմը մերժել է գործը Մեծ պալատ ուղարկելու մասին միջևորդությունը:

Մեծ պալատի վճիռը վերջնական է (հոդված 44(1)): Վերջնական դառնալուց հետո վճիռները դառնում են կատարման համար պարտադիր (հոդված 46(1)):

Անդամ պետություններին օգնելու համար Վճիռների կատարման վարչությունն հրապարակել է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման համար գործողությունների ծրագրերի և զեկույցների մշակման ուղեցույց (Guide for the drafting of action plans and reports for the execution of Judgments of the European Court of Human Rights): Վերջինս շատ օգտակար պրակտիկ ռեսուրս է, որով կարելի է ավելի խորը պատկերացումներ կազմել գործողությունների ծրագրերի/զեկույցների պատրաստման և նշանակության մասին:

Ինչ վերաբերում է «արդար հատուցում» վճարելուն, ապա կատարման պայմանները շարադրված են ՄԻԵԴ-ի համապատասխան վճռում (Ժամկետ, արժույթ, տոկոսներ վճարումն ուշացնելու համար): ՆԿ-ի պրակտիկան՝ կապված արդար հատուցման վճարման հետ, մանրամասնեցված է [վճիռների կատարման վարչության պատրաստած հուշագրում](#) (փաստաթուղթ թիվ 9, տե՛ս ստորև՝ «NGO Implementation Tool Kit»):

Ինչ վերաբերում է փոխհատուցում չառաջացնող միջոցներին (անհատական միջոցներ կամ ընդհանուր միջոցներ), ապա ՄԻԵԴ-ի վճիռների մեջ սովորաբար նշված չեն լինում որոշակի միջոցներ: Դեպքերի մեծ մասում պատասխանող պետությունը պետք է ՆԿ-ի հետ երկխոսության միջոցով որոշի, թե ինչ միջոցներ է անհրաժեշտ ձեռնարկել վճռի լիարժեք կատարումն ապահովելու համար: Ուստի, ՆԿ-ն և Վճիռների կատարման վարչությունը կարևորագույն դեր են կատարում վերահսկելով անդամ պետությունների ջանքերը մարդու իրավունքներին վերաբերող վճիռների կատարման ուղղությամբ՝ նրանց տալով ուղեցույցներ, խորհուրդներ, և վերահսկելով նրանց գործողությունները՝ ընդունելով որոշումներ և միջանկյալ բանաձևեր անհատական գործերի կատարման ընթացքի վերաբերյալ: Այնուամենայնիվ, հատկապես հորթբային համակարգային խնդիր բացահայտող վճիռների մասին ՆԿ-ի 2004 թվականի [Res\(2004\)3](#) բանաձևի ընդունումից հետո ՄԻԵԴ-ը մի շարք վճիռներ է կայացրել, որոնցում ուղղակիորեն մատնանշել է պահանջվող անհատական միջոցները կամ ընդհանուր միջոցները՝ ՄԻԵԿ-ի 46-րդ հոդվածի ներքո, կամ կայացրել է «պիլոտային վճիռներ»:

1.3.2. Գործերի դասակարգումը. «առաջատար», «կրկնվող» կամ «մեկուսի»

Գործերի դասակարգումը՝ որպես «առաջատար», «կրկնվող» կամ «մեկուսի» գործ, կարևոր միջոց է վերահսկողության համակարգի գործունեությունը հստակեցնելու համար: Դասակարգման հիմնական սկզբունքը **«առաջատար գործերի»** բացահայտումն է: Դրանք այն գործերն են, որոնք կառուցվածքային և/կամ հաճախ Է՛լ համակարգային չոր խնդիրներ են բացահայտում, որոնց համար պահաջվում են ընդհանուր բնույթի չոր միջոցներ: «Առաջատար» չճանաչված գործերը կա՛մ **«կրկնվող»** են, քանի որ դրանցով ծագում է կառուցվածքային և/կամ համակարգային խնդիր, որն արդեն իսկ բացահայտվել է նախկինում քննված որևէ «առաջատար» գործի շրջանակում, կա՛մ **«մեկուսի»** են, քանի որ արձանագրված խախտումներն ըստ երևույթին սերտորեն կապված են տվյալ գործի կոնկրետ հանգամանքներից, և սովորաբար դրանց համար չեն պահաջվում ընդհանուր բնույթի որևէ միջոցներ:

Վճռի կատարման գործընթացի իմաստով՝ **«կրկնվող» գործերը** խմբավորվում են համապատասխան առաջատար գործի հետ և հայտնվում ՆԿ-ի օրակարգում (և տվյալների շտեմարանում) առաջատար գործի անվանման ներքո: Առաջատար գործին վերաբերող գործողությունների ծրագրում շարադրված ընդհանուր միջոցները կիրառելի են համարվում նաև տվյալ խմբի կրկնվող գործերի նկատմամբ, ուստի՝ երբ ՆԿ-ն համարում է, որ առաջատար գործի համար նախատեսված գործողությունները կատարվել են, դրան առնչվող կրկնվող գործերի մասով նույնպես համարվում է, որ նախատեսված գործողությունները կատարված են: Երբ կրկնվող գործի կատարման համար անհրաժեշտ են անհատական միջոցներ, ապա դրանց վերաբերյալ տեղեկությունը սովորաբար տրվում է այն

ժամանակ, երբ թարմացվում է տվյալ ողջ խմբին վերաբերող գործողությունների ծրագիրը:

Այն գործերը, որոնցով մեկից ավելի խնդիրներ են ծագում, կարող են մեկ խնդրի մասով դասակարգվել որպես առաջատար գործ, իսկ մեկ այլ խնդրի մասով՝ որպես կրկնվող գործ:

[HUDOC-EXEC database](#) տվյալների շտեմարանում արձանագրվում են առաջատար և կրկնվող գործերի փոխկապակցվածությունները:

1.3.3. Վերահսկողության երկշերտ համակարգը

2011 թվականի հունվարին ՆԿ-ն ներդրեց վերահսկողության նոր երկշերտ համակարգ՝ միտված գործընթացի արդյունավետության և թափանցիկության բարձրացմանը: Ուսումնասիրվող գործերն համակարգում դասակարգվում են որպես «ստանդարտ վերահսկողության» և «հավելյալ վերահսկողության» ենթակա գործեր: Դրանց տարբերությունն հետևյալն է. հավելյալ վերահսկողության ենթակա գործերի դեպքում ՆԿ-ն ակտիվ դեր ունի կատարման մշտադիտարկման մեջ, մասնավորապես՝ գործերը վերանայելով ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված եռամսյակային նիստերի ընթացքում (տե՛ս 1.3.4 կետը ստորև): Մյուս կողմից, ստանդարտ վերահսկողության ենթակա գործերի դեպքում վերանայման գործառույթն հիմնականում իրականացնում է Վճիռների կատարման վարչությունը, իսկ ՆԿ-ի դերը սահմանափակվում է գործողությունների համարժեք ծրագրերի/զեկույցների ներկայացումն ապահովելով և համապատասխան ժամանակահատվածում հայտարարված և/կամ իրագործված միջոցի բավարարությունը ստուգելով:

Նոր գործերը «հավելյալ վերահսկողության» ենթակա ճանաչելու չափորոշիչներն հետևյալն են.

- Հրատապ անհատական միջոցների կարիք ունեցող գործերը,
- Պիլոտային վճիռները,
- Վճիռները, որոնք այլ առումով ի հայտ են բերում կառուցվածքային և/կամ համալիր էական խնդիրներ, որոնք արձանագրվել են ՄԻԵԴ-ի և/կամ ՆԿ-ի կողմից,
- Միջպետական գործերը:

Դասակարգման որոշումը կայացվում է գործն առաջին անգամ ՆԿ-ին ներկայացնելիս՝ հիմնվելով Վճիռների կատարման վարչության խորհրդատվության վրա:

ՆԿ-ն վերահսկողության գործընթացում ցանկացած պահի կարող է որոշում կայացնել գործը ստանդարտից հավելյալ վերահսկողության ընթացակարգ փոխադրելու մասին՝ անդամ պետության կամ Վճիռների կատարման վարչության միջնորդության հիման վրա: Տուժած կողմը, ՀԿ-ները կամ Մարդու իրավունքների ազգային ինստիտուտները կարող են իրենց գրավոր տեղեկանքներում միջնորդել, որպեսզի ՆԿ-ն և Վճիռների կատարման վարչությունը գործն ուսումնասիրեն հավելյալ վերահսկողության ընթացակարգով: Նմանապես, հավելյալ վերահսկողության ենթակա գործը կարող է փոխադրվել ստանդարտ վերահսկողության դաշտ, եթե ՆԿ-ն բավարար է գնահատում ներկայացված գործողությունների ծրագիրը և/կամ դրա իրագործումը, կամ երբ իրագործման ճանապարհին այլևս չկան խոչընդոտներ, կամ երբ պահանջվող հրատապ անհատական միջոցներն արդեն իրագործվել են: Անդամ պետությունները սովորաբար մեծ ցանկություն ունեն՝ գործերը հավելյալ վերահսկողության դաշտից փոխադրելու ստանդարտ վերահսկողության դաշտ, և հասնելուն դրան, որ այդ փաստն արտացոլվի իրենց գործողությունների ծրագրերի վերանայված տարբերակներում:

Հավելյալ վերահսկողության ենթակա գործերի ցանկը, որը պարբերաբար թարմացվում է, տեղադրված է [Վճիռների կատարման վարչության կայքէջում](#):

2019 թվականի հոկտեմբերի դրությամբ ընթացքի մեջ գտնվող մոտ 1,250 առաջատար գործերից մոտ մեկ քառորդը (300-ը) ենթակա էին հավելյալ վերահսկողության:

ՆԿ-ի ներկայիս աշխատանքային մեթոդները, որոնցով նախատեսվում է գործողությունների ծրագրեր և զեկույցներ ներկայացնելու՝ անդամ պետության պարտավորությունը և վերահսկողության երկշերտ համակարգը, նպատակ ունեն երաշխավորել լիարժեք կատարման ենթակա բոլոր վճիռների նկատմամբ ՆԿ-ի շարունակական վերահսկողությունը: Վճիռների կատարման վարչությունը պատասխանատու է անդամ պետությունների հետ ընթացիկ հաղորդակցության համար և ստանում է պետությունների գործողությունների ծրագրերը, զեկույցները, թարմացումները և վերաբերելի այլ տեղեկությունները՝ դրանք հետագայում բաժանելով ՆԿ-ի անդամներին:

1.3.4. Նախարարների կոմիտեի նիստերը՝ նվիրված մարդու իրավունքներին

ՆԿ-ն մարդու իրավունքներին նվիրված եռամսյակային նիստեր (երբեմն դրանք անվանվում են «ՄԻ նիստեր») է գումարում: Նիստում, որը տևում է երեք օր, ՆԿ-ն մանրակրկիտ վերանայում է մոտ 25-40 վճիռների կատարման առաջընթացը և ընդունում որոշումներ կամ միջանկյալ բանաձևեր՝ դրանցում ներառելով անդամ պետություններին ուղղված երաշխավորություններով, ցուցումներ և մտահոգություններ: Հաշվի առնելով, որ Մարդու իրավունքներին նվիրված յուրաքանչյուր նիստի ժամանակ քննարկվող գործերի թիվը սահմանափակ է, Նախարարների կոմիտեն ուսումնասիրում է միայն այն գործերը, որոնք ենթակա են «հավելյալ վերահսկողության» («enhanced supervision»):

ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված նիստերը տեղի են ունենում յուրաքանչյուր տարի մարտ, հունիս, սեպտեմբեր և դեկտեմբեր ամիսներին: Նիստերը դռնփակ են. տուժածները կամ ՀԿ-ները չեն կարող մասնակցել դրանց:

ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված հաջորդ նիստի օրակարգում ներառվելիք գործերի մոտավոր ցանկն ընդունվում է ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված յուրաքանչյուր նախորդ նիստին և նիստից հետո կարճ ժամկետում հրապարակվում են ՆԿ-ի և Վճիռների կատարման վարչության կայքէջերում: Այդ ցանկից ՆԿ-ի քննարկման համար ընտրվում են մի շարք գործեր, որոնցով համարվում է, որ կարող է անհրաժեշտ լինել ավելի մանրակրկիտ ուսումնասիրություն: Ուստի, նիստերը ՆԿ-ին հնարավորություն են ընձեռում՝ լրացուցիչ լծակ գործադրել կամ խրախուսել անդամ պետություններին, որպեսզի վերջիններս ավելի մեծ ջանք գործադրեն, հատկապես այն գործերով, որոնց կապակցությամբ արձանագրվել են մարդու իրավունքներին առնչվող կառուցվածքային կամ համալիր հիմնախնդիրներ:

Նիստի օրակարգի մեջ ներառված այն գործերը, որոնք նիստի ժամանակ չեն քննարկվում մնում են ՆԿ-ի վերահսկողության ներքո. այդ ընթացակարգի շրջանակում Վճիռների կատարման վարչությունը կազմում է որոշման նախագիծ, վերջինս նախապես ուղարկում է ՆԿ-ի անդամներին, որից հետո այն ընդունվում է առանց ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված նիստի ժամանակ քննարկվելու: Որոշումների նախագծերը նախապես շրջանառելու շնորհիվ հնարավոր է դառնում, որպեսզի ՆԿ-ի անդամները որոշման նախագծին առնչվող մտահոգություններ ունենալու դեպքում

որոշման նախագիծը փոփոխվի կամ, եթե անհրաժեշտ է, տվյալ գործն ավելացվի քննարկվելիք գործերի ցանկին:²

² Լրացուցիչ մանրամասների համար տե՛ս ՆԿ-ի կողմից վճիռների կատարման և հաշտության համաձայնությունների նկատմամբ վերահսկողության կանոնները, որոնք ընդունվել են 2006 թվականի մայիսի 10-ին, փոփոխվել՝ 2017 թվականի հունվարի 18-ին:

2. Հասարակական կազմակերպությունների և տուժածների մասնակցությունը

ՀԿ-ները, տուժածները և Նրանց իրավախորհրդատուները մի քանի եղանակներով կարող են մասնակցել ՆԿ-ի կողմից վճիռների կատարման գործընթացին և աջակցել ՄԻԵԴ-ի վճիռների լիարժեք, ժամանակին և արդյունավետ կատարմանը: Բազմաթիվ գործերով այդ մասնակցությունը կարող է կարևորագույն նշանակություն ունենալ գործընթացի արդյունավետության համար: Եվ իսկապես, առանց շահագրգիռ կողմերի մասնակցության, ՆԿ-ն կարող է հայտնվել այնպիսի իրավիճակում, որում վճիռների կատարման վերաբերյալ կլսի միայն պետության ասելիքը:

2.1. Նախարարների կոմիտեին ներկայացվող գրավոր տեղեկանքները

ՆԿ-ին ներկայացվող գրավոր տեղեկանքներն այն հիմնական և առավել պաշտոնական գործիքն են, որով տուժածները, ՀԿ-ները և Նրանց իրավախորհրդատուները մասնակցում են գործընթացին: ՆԿ-ի կանոնակարգի 9-րդ կանոնի համաձայն՝ տուժածները և ՀԿ-ներն իրավունք ունեն տեղեկանքներ ներկայացնել ՆԿ-ին՝ կատարման գործընթացին աջակցելու համար: Հարկ է նշել, որ նման տեղեկանքներ ներկայացնելու իրավունք ունեն նաև Մարդու իրավունքների ազգային ինստիտուտները (2017 թվականի հունվարից ի վեր) և միջազգային կազմակերպությունները (կամ դրանց մարմինները կամ գործակալությունները):

Կանոն 9. Նախարարների կոմիտեի ներկայացվող տեղեկանքները

Այս կանոնը փոփոխվել է Նախարարների տեղակալների կողմից՝ Նախարարների կոմիտեի 1275-րդ նիստում: Ավելացված կամ փոփոխված պարբերություններն մզեցված են:

1. Նախարարների կոմիտեն պարտավոր է քննարկել տուժածի ներկայացրած տեղեկանքները, որոնք վերաբերում են արդար հատուցման վճարմանը կամ անհատական միջոցների իրագործմանը:
2. Նախարարների կոմիտեն իրավունք ունի քննարկել հասարակական կազմակերպությունների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության և խթանման ազգային ինստիտուտների ներկայացրած տեղեկանքները, որոնք վերաբերում են վճիռների կատարմանը Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ մասի ներքո:
3. Նախարարների կոմիտեն իրավունք ունի նաև քննարկել այն միջազգային միջկառավարական կազմակերպությունների կամ դրանց մարմինների կամ գործակալությունների տեղեկանքները, որոնց նպատակը և գործունեությունը ներառում են մարդու իրավունքների խթանումը՝ ինչպես դա սահմանված է Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում, եթե այդ տեղեկանքները վերաբերում են Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ մասի ներքո վճիռների կատարմանն առնչվող այնպիսի խնդիրների, որոնք տեղավորվում են Նրանց լիազորությունների շրջանակի մեջ:
4. Նախարարների կոմիտեն իրավունք ունի նաև քննարկել այն կառույցի կամ մարմնի տեղեկանքը, որն իրավունքի ուժով կամ Դատարանի հատուկ իրավերով ներգրավվել է Դատարանում իրականացված վարույթին, եթե այդ տեղեկանքը վերաբերում է Կոնվենցիայի 46-րդ հոդվածի 2-րդ մասի ներքո վճիռների կատարմանը կամ բոլոր գործերի առնչությամբ (Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հանձնակատարի մասով), կամ Դատարանի կողմից թույլատրված կոնկրետ գործերի մասով (ցանկացած այլ կառույցի կամ մարմնի մասով):
5. Քարտուղարությունը պարտավոր է սույն Կանոնի 1-ին մասի համաձայն ստացած բոլոր տեղեկանքներն հավուր պատշաճի ներկայացնել Նախարարների կոմիտեի ուշադրությանը:
6. Քարտուղարությունը պարտավոր է սույն Կանոնի 2-րդ, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն ստացած բոլոր

տեղեկանքները ներկայացնել համապատասխան պետության ուշադրությանը: Եթե պետությունը պատասխանում է հինգ աշխատանքային օրվա ընթացքում, ապա տեղեկանքը և պատասխանը ներկայացվում են Նախարարների կոմիտեի ուշադրությանը և հրապարակվում են: Եթե սահմանված ժամկետում պետությունը չի պատասխանում, ապա տեղեկանքը փոխանցվում է Նախարարների կոմիտեին, սակայն չի հրապարակվում: Այն հրապարակվում է ծանուցումից 10 աշխատանքային օր անց՝ այդ ժամկետում պատասխան ստանալու դեպքում այդ պատասխանի հետ մեկտեղ: 10 աշխատանքային օրվա ժամկետից հետո պետությունից ստացված պատասխանը շրջանառվում և հրապարակվում է առանձին:

Ներկայացվող բոլոր տեղեկանքներն հրապարակվում են ՆԿ-ի [HUDOC EXEC database](#) տեղեկատվական շտեմարանում (տե՛ս Հավելված 2):

2.1.1. Տուժածի կողմից 9.1 կանոնի համաձայն ներկայացվող տեղեկանքը

ՆԿ-ի կանոնակարգի 9.1 կանոնի համաձայն, տուժածները կարող են ՆԿ-ին տեղեկանք ներկայացնել միայն արդար հատուցման վճարման կամ անհատական միջոցների իրագործման հարցի կապակցությամբ:

ՆԿ-ի գործող կանոններով էական պատասխանատվություն է սահմանվում տուժածի համար, որի համաձայն վերջինս պարտավոր է ՆԿ-ին տեղեկացնել արդար հատուցման վճարման կապակցությամբ ծագող ցանկացած խնդրի մասին: Երբ Վճիռների կատարման վարչությունը համապատասխան պետությունից տեղեկություններ է ստանում փոխհատուցում վճարելու մասին, այդ տեղեկությունն հրապարակվում է Վճիռների կատարման վարչության կայքէջում (www.coe.int/execution)՝ նշելով, որ տուժած կողմն այդ ժամանակից սկսած երկու ամիս ունի ցանկացած բողոք Վճիռների կատարման վարչությանը ներկայացնելու համար: Տուժածը ՄԻԵԴ-ի վճռին կից նամակով նախապես զգուշացված է լինում, որ այդ պահից սկսած ինքն է պատասխանատու արձանագրված և հրապարակված վճարման ակնհայտ թերացումներին արագորեն արձագանքելու համար: Եթե ստացվում է նման բողոք, վճարումը հատուկ կարգով վերանայվում է: Տուժածը պետք է նաև տեղեկացնի ՆԿ-ին, եթե պետությունն ուշացնում է փոխհատուցման վճարումը: Եթե երկամսյա ժամկետի ընթացքում բողոք չի ստացվում, ապա արդարացի փոխհատուցման վճարման խնդիրն համարվում է փակված:

Արդարացի փոխհատուցման վճարման հետ կապված ողջ նամակագրությունը պետք է ուղարկել Վճիռների կատարման վարչությանը փոստով, էլ-փոստով կամ ֆաքսով.

DGI Directorate General of Human Rights and Rule of Law
Department for the Execution of Judgments of the ECtHR

Just Satisfaction Section

F-67075 Strasbourg Cedex FRANCE

Fax +33(0)3.88.41.27.93

Email: dgi_execution_just_satisfaction@coe.int

Վճարմանն առնչվող հարցերի վերաբերյալ տեղեկությունը մի քանի լեզուներով առկա է Վճիռների կատարման վարչության կայքէջում՝ [Payment Information](#) բաժնում:

Տուժածների բողոքների կամ անհատական միջոցներին առնչվող այլ դիտարկումների

Նկատմամբ կիրառելի չեն որոշակի ժամկետային սահմանափակումներ կամ այլ իրավակարգավորումներ:

2.1.2. ՀԿ-ների կողմից 9.2 կանոնի համաձայն ներկայացվող տեղեկանքները

ՀԿ-ները կարող են տեղեկանքներ ներկայացնել ՄԻԵԴ-ի վճիռների կատարմանն առնչվող բոլոր խնդիրների վերաբերյալ: 9.2 կանոնի ձևակերպումը տեղեկանքների բովանդակության մասով ավելի լայն է, քան 9.1 կանոնինը: Ստացվում է, որ ՀԿ-ները կարող են ներկայացնել տեղեկանքներ, «որոնք վերաբերում են վճիռների կատարմանն առնչվող խնդիրների» կամ «հաշտության համաձայնությունների պայմանների կատարմանը»: **Ուստի, ՀԿ-ների տեղեկանքները կարող են վերաբերել թե՛ անհատական, թե՛ ընդհանուր միջոցներին, և կարող են ցանկացած պահի դրությամբ ներկայացվել ՆԿ-ում ընթացքի մեջ գտնվող ցանկացած գործի վերաբերյալ:**

2.1.2.1. Տեղեկանքների բովանդակությունը

Տեղեկանքների բովանդակությունը կարող է վերաբերել թե՛ գործողությունների ծրագրի/զեկույցի բովանդակությանը, թե՛ ընթացակարգային խնդիրների:

Ինչ վերաբերում է բովանդակությանը, ապա տեղեկանքները պետք է վերաբերեն պետության գործողությունների ծրագրի (կամ պետության գործողությունների ծրագրում կատարված թարմացումների) շրջանակին և բովանդակությանը.

- Անհատական միջոցների մասով՝ անդրադառնալով ընդունված/նախատեսվող անհատական միջոցների համարժեքությանը, մատնանշելով այն դեպքը, երբ անհատական միջոցի համար անհրաժեշտ է նախապես ընդունել ընդհանուր միջոց, և թե ինչպես պետք է դրանք կազմել, և թարմ տեղեկություններ տալով անհատական միջոցների առնչությամբ ձեռնարկված գործողությունների մասին,
- Առաջարկելով լրացուցիչ ընդհանուր միջոցներ, երբ պետության կողմից առաջարկված ընդհանուր միջոցներն անբավարար են (օրինակ՝ երբ գործով ի հայտ են գալիս մարդու իրավունքների համակարգային կամ կառուցվածքային խնդիրներ, բայց դրանք ուղղակիորեն չեն վճռում և արհամարվում են պետության կողմից),
- Ներկայացնելով այդ լրացուցիչ միջոցների անհրաժեշտությունն հիմնավորող ապացույցներ,
- Վիճարկելով պետության տրամադրած բոլոր այն տեղեկությունները, որոնց վերաբերյալ համարվում է, որ դրանք թյուր են ներկայացնում կամ ուռճացնում են միջոցների իրագործման ուղղությամբ ձեռք բերված առաջընթացը,
- Տրամադրելով առավել ընդհանուր տեղեկություններ իրավիճակի մասին, եթե օրինակ համարվում է, որ գործողությունների ծրագիրը/զեկույցը լիարժեքորեն չի արտացոլում խախտման տեղիք տված գործոնների լրջությունը (դա կարող է տեղի ունենալ, երբ օրինակ պետությունն անուշադրության է մատնում խախտումը՝ պնդելով, թե դա մեկուսի դեպք է, երբ իրականում այն բացասական գործելակերպի ընդհանրական միտումների մաս է կազմում),
- Տրամադրելով համապատասխան տեղեկություններ այն մասին, որ պետության կողմից արդեն իսկ իրագործված ընդհանուր միջոցներն անարդյունավետ են եղել:

ՀԿ-ները կարող են նաև.

- Հղում կատարել եւս փորձագիտական մարմինների (օրինակ՝ Խոշտանգման կանխարգելման կոմիտեի (CPT), Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողովի (CEPEJ), Ռասիզմի և անհանդուրժողության դեմ եվրոպական հանձնաժողովի (ECRI), Մարդու իրավունքների հանձնակատարի, Խորհրդարանական վեհաժողովի մոնիթորինգի հանձնաժողովի) զեկույցներին կամ ազգային և միջազգային այլ կառույցների փորձագիտական մարմիններին՝ հաշվի առնելով, որ այդ զեկույցներն ընդհանուր առմամբ հայտնի են Վճիռների կատարման վարչությանը և օգտագործվում են վերջինիս կողմից,
- Առաջարկել ապացույցների այն տեսակները, որոնք ՆԿ-ն կարող է պահանջել պետությունից՝ հիմնավորելու համար միջոցների իրագործման առաջընթացը կամ արդեն իրագործված միջոցների արդյունավետությունը:

Հավելյալ ընթացակարգի ներքո գտնվող գործերի դեպքում կարևոր է ուսումնասիրել ՆԿ-ի վերջին որոշումը, քանի որ դրանում կարող է առաջարկված լինել, որպեսզի ուշադրություն դարձվի ՀԿ-ի տեղեկանքին, կամ ՆԿ-ի հաջորդ նիստի ժամանակ քննարկումը սահմանափակել գործին առնչվող կոնկրետ խնդրով:

ՀԿ-ները պետք է խուսափեն այնպիսի երաշխավորություններ կամ տեղեկություններ ներկայացնելուց, որոնք գերազանցում են վճռի կատարման համար պահանջվող գործողությունների կամ միջոցների շրջանակը:³ Կոնկրետ վճռի համար պահանջվող քայլերը կարող են որոշ չափով քննարկման առարկա լինել, հատկապես՝ երբ խոսք է գնում ընդհանուր միջոցների մասին: Ձեռնարկվելիք ավելի ընդհանուր բնույթի քայլերի (օրինակ՝ օրենքի կամ քաղաքականության բարեփոխումների կամ վերապատրաստումների) վերաբերյալ առաջարկներ անելիս ՀԿ-ի տեղեկանքը պետք է ձգտի նաև հիմնավորել, որ այդ քայլերն իսկապես անհրաժեշտ են տվյալ վճռի կատարումն ապահովելու համար:

ՀԿ-ներին խորհուրդ է տրվում նաև խուսափել «բարոզարշավային» կամ հուզական տոնայնություն կիրառելուց:

Ինչպես արդեն նշվեց, ՀԿ-ների տեղեկանքները կարևորագույն դեր են կատարում հակակշռելով ՆԿ-ի կախվածությունը պետության տրամադրած տեղեկություններից: Դրան նպաստում է ևս մեկ մեխանիզմ. ինչպես նկարագրվում է ստորև [\(Եջ 19\)](#), պետությունն ունի ՀԿ-ի տեղեկանքում ներառված տեղեկություններին **պատասխանելու իրավունք**: ՀԿ-ի ներկայացրած տեղեկություններին վերագրվող կշիռը զգալիորեն մեծանում է, եթե պետությունը չի կարողանում հերքել սխալների, բացթողումների կամ թյուր ներկայացված տեղեկությունների մասին պնդումները, կամ եթե պետությունը չի կարողանում հիմնավորել, թե ինչու չպետք է իրագործվի ՀԿ-ի կողմից առաջարկվող ընդհանուր միջոցը: Ուստի, երբ ՀԿ-ն հիմնավորում է, որ պետության ներկայացրած տեղեկություններն անարժանավատ են, տվյալ գործի կատարման ընթացքին նոր թափ է հաղորդվում, և տվյալ պետությունը կարող է համոզվել, որպեսզի վճռի կատարման գործընթացին ավելի լրջորեն վերաբերվի, մասնավորապես՝ ապագայում ավելի շատ ուշադրություն դարձնի ՀԿ-ների կողմից իրականացվող ջատագովությանը: Նմանապես, պատասխանի իրավունքի այդ մեխանիզմի շրջանակում ՀԿ-ները որոշակի պարտավորություն են կրում՝ ապահովելու իրենց փաստերի ճշգրտությունը:

³ Ավելի հեռուն գնացող մտահոգությունները կարելի է ներկայացնել ԵԽ-ի այլ կառույցներին (օրինակ՝ ԵԽԽԿ-ին, Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակին, Ռասիզմի և անհանդուրժողության դեմ եվրոպական հանձնաժողովին (ECRI), Խոշտանգման կանխարգելման կոմիտեին (CPT)):

Ինչ վերաբերում է դատավարական հարցերին, ապա ՀԿ-ները կարող են.

- Պահանջել գործի մանրակրկիտ ուսումնասիրության արագ իրականացում
Այն հանգամանքներում, երբ զարգացումները պահանջում են գործի հրատապ ուսումնասիրություն:
- Պահանջել, որպեսզի պետություններն ուշացնելու դեպքում ներկայացնեն գործողությունների ծրագիր/զեկույցներ
Պետությունները պարտավոր են գործողությունների ծրագրեր/զեկույցներ ներկայացնել վճռի վերջնական դառնալուց հետո առավելագույնը վեց ամսվա ընթացքում: ՀԿ-ներն իրավունք ունեն նաև պահանջել, որ պետությունը թարմացված տեղեկություններ ներկայացնի այն դեպքում, երբ տևական ժամանակի ընթացքում չի ներկայացվել գործողությունների ծրագիր:
- Պահանջել, որպեսզի ստանդարտ վերահսկողության փոխարեն կիրառվի հավելյալ վերահսկողության ընթացակարգ
Նման պահանջի հիմնավորում կարող է լինել գործողություն ծրագիրը շարունակաբար չներկայացնելը, պետության և Վճիռների կատարման վարչության միջև անհամաձայնությունը գործողության ծրագրի/զեկույցի բովանդակության շուրջ, ինչպես նաև հայտարարված միջոցների իրագործման Էական ձգձգումը:⁴
- Դեմ արտահայտվել գործը հավելյալից ստանդարտ վերահսկողություն տեղափոխելուն
Այն դեպքում, երբ ՀԿ-ներն համաձայն չեն պետության այն պնդման հետ, որ կատարման ճանապարհին այլևս չկան խոչընդոտներ, կամ որ արդեն իսկ ձեռնարկվել են անհատական հրատապ միջոցներ:
- Պահանջել, որպեսզի գործը ներառվի մարդու իրավունքներին նվիրված՝ Նախարարների կոմիտեի հաջորդ նիստի օրակարգում
Եթե համարում են, որ գործն հրատապ ուշադրության կարիք ունի, ՀԿ-ները կարող են պահանջել, որ այն ներառվի մարդու իրավունքներին նվիրված՝ Նախարարների կոմիտեի հաջորդ նիստի օրակարգում:
- Պահանջել գործի քննարկում ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված եռամսյակային նիստի ընթացքում
Ինչպես նշվեց, ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված եռամսյակային նիստերի ընթացքում քննարկման առարկա են դառնում միայն հավելյալ վերահսկողության ներքո գտնվող որոշ գործեր:⁵ Եթե ՀԿ-ները համարում են, որ կոնկրետ գործն ավելի շատ ուշադրության է արժանի ՆԿ-ի կողմից, ապա նրանք պետք է հստակ, համոզիչ փաստարկներով հիմնավորեն, թե այդ ուշադրությունն ինչու և ինչպես կօգնի վճռի կատարման գործընթացին:
- Պահանջել ՆԿ-ի միջանկյալ բանաձևի ընդունում
ՆԿ-ն կարող է ՆԿ-ի կանոնակարգի 16-րդ կանոնի համաձայն ընդունել միջանկյալ

⁴ St´u Committee of Ministers, *Supervision of the execution of judgments and decisions of the European Court of Human Rights: implementation of the Interlaken Action Plan – Modalities for a twin-track supervision system*, CM/Inf/DH(2010)37, p.6:

⁵ Նույն տեղը, էջ 6: Գործը քննարկելու պահանջը կարող է ներկայացվել պետության կամ քարտուղարության կողմից. «Երկշերտ նոր համակարգի ոգուց պարզ է դառնում, որ քննարկման համար առաջադրվող խնդիրները սերտորեն կապված են կատարման գործընթացում առաջընթացի և ՆԿ-ից աջակցություն և/կամ ուղղորդում ստանալու անհրաժեշտության հետ»:

բանաձևեր, որոնցով կարող է, օրինակ, մտահոգություն հայտնել կամ առաջարկներ ներկայացնել կատարման վերաբերյալ, կամ ավելի մեծ ճնշում գործադրել պետության վրա, որպեսզի վերջինս տեղեկություններ տա ձեռք բերված առաջընթացի մասին: Դա ավելի ծանրակշիռ ընթացակարգային գործիք է, քան ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված նիստերի ժամանակ ընթացիկ հիմունքներով կայացվող որոշումները:

- Պահանջել, որպեսզի ՆԿ-ն վճիռը մեկնաբանման համար ուղարկի ՄԻԵԴ-ին
ՄԻԵԿ-ի 46 (3) հոդվածի համաձայն, եթե ՆԿ-ն համարում է, որ վճռի կատարման նկատմամբ վերահսկողությանը խոչընդոտում է մեկնաբանման խնդիրը, ապա այն կարող է խնդիրը ներկայացնել ՄԻԵԴ-ին, որպեսզի վերջինս որոշում կայացնի մեկնաբանման հարցի մասին: ՉԿ-ները պետք է ապացույցներ ներկայացնեն առ այն, որ մեկնաբանման խնդիրը խոչընդոտում է պատշաճ կատարումը: Այս մեխանիզմի համար պահանջվում է ՆԿ-ի անդամների ձայների երկու երրորդի մեծամասնությունը, ուստի՝ հավանական է, որ այն հազվադեպ կգործադրվի:
- Բացառիկ հանգամանքներում պահանջել, որպեսզի նախաձեռնվի ոտնահարման վարույթ
ՄԻԵԿ-ի 46 (4) հոդվածի համաձայն, եթե ՆԿ-ն համարում է, որ պետությունն հրաժարվում է կատարել վերջնական վճիռը, այն կարող է դիմել ՄԻԵԴ-ին՝ պետության կողմից իր պարտավորությունը չկատարելու հարցով: Այս մեխանիզմը ներդրվել է 2010 թվականին (երբ ուժի մեջ մտավ ՄԻԵԿ-ի թիվ 14 լրացուցիչ արձանագրությունը)՝ որպես կատարմանն աջակցող նոր միջոց (թեպետ պատժամիջոցներ, որպես այդպիսին, Դատարանի տրամադրության տակ չկան): Այս մեխանիզմի համար պահանջվում է ՆԿ-ի անդամների ձայների երկու երրորդի մեծամասնությունը, ուստի՝ հավանական է, որ այն բացառիկ դեպքերում միայն կգործադրվի:

2017 թվականի դեկտեմբերին, պատմության մեջ առաջին անգամ կիրառելով ոտնահարման վարույթի մեխանիզմը, ՆԿ-ն [Ilgar Mammadov](#) ընդդ. Ադրբեյջանի գործը վերադարձրեց ՄԻԵԴ-ին: Ինչպես ցույց է տալիս Մամմադովի գործի հետ ունեցած փորձառությունը, ՆԿ-ն գործը վերադարձնում է ՄԻԵԴ-ին միմիայն շատ բացառիկ դեպքերում, երբ կոպտորեն խախտվում են հիմնարար այնպիսի արժեքներ, ինչպիսին է, օրինակ, ազատության իրավունքը: Այնուհանդերձ, հավանական է, որ դրա համար տևական և շարունակական ջատագովություն կպահանջվի ՉԿ-ներից: Այս տարբերակից օգտվել ցանկացող ՉԿ-ները, ուստի, պետք է ձգտեն հիմնավոր ապացույցներ ներկայացնել՝ հաստատելու համար, որ պետությունն իսկապես չի կատարում վճիռը (ի տարբերություն, օրինակ, ընթացքի մեջ գտնվող կատարման դեպի կամ գործընթացի ձգձգման իրավիճակի):

2.1.2.2. Տեղեկանքների կառուցվածքը

ՉԿ-ների տեղեկանքները սովորաբար ներկայացվում են՝ ի պատասխան պետության գործողությունների ծրագրին կամ զեկույցին: Դրանք պետք է ունենան հետևյալ ստանդարտ կառուցվածքը.

- Գործի կամ գործերի խմբի նկարագրությունը
- Անհատական միջոցները
- Ընդհանուր միջոցները
- Եզրակացությունները

ՉԿ-ի տեղեկանքը պետք է դեպքերի մեծ մասում կազմված լինի ստանդարտ կառուցվածքով (իսկ երբ հնարավոր է՝ պետության կողմից գործողությունների ծրագրում/զեկույցում կիրառված ենթաբաժանումների տրամաբանությամբ), որպեսզի ՆԿ-ն կարողանա ՉԿ-ի շարադրած

փաստարկները հեշտորեն հարաբերակցել պետության ներկայացրած տեղեկություններին: ՀՀ-ի տեղեկանքը պետք է հնարավորինս հակիրճ լինի. խորհուրդ է տրվում, որպեսզի դրա երկարությունը չգերազանցի հինգ էջը: Ավելի մանրակրկիտ տեղեկություններ կարելի է ներառել հավելվածներում:

Գործի նկարագրությունը պետք է ներառի գործի/գործերի խնդրո առարկայի համառոտ նկարագրությունը, վերաբերելի փաստերի ամփոփումը և ՄԻԵԴ-ի արձանագրած խախտման համառոտ նկարագրությունը: Այն պետք է հակիրճ լինի և վերաբերի վճռի այն տարրերին, որոնք էական նշանակություն ունեն կատարման համար պահանջվող անհատական և ընդհանուր միջոցներն ընտրելու տեսանկյունից: Օգտակար ելակետ կարող է լինել գործի նկարագրությունը, որը հրապարակվում է [HUDOC-EXECdatabase](#) շտեմարանում:

ՀԿ-ները պետք է ներկայացնեն նաև.

- Ներածական մեկ պարբերություն, որտեղ համառոտ նկարագրվում է ՀԿ-ն, դրա գործունեության հիմնական ոլորտները և մասնագիտացումը և գործի խնդրո առարկայի կապակցությամբ ունեցած համապատասխան փորձառությունը,
- Մեկ-երկու նախադասության չափով համառոտ տեղեկություն այն մասին, թե որոնք են ներկայացված տեղեկանքի հիմնական նպատակները, և
- Անհրաժեշտության դեպքում՝ ՆԿ-ին տրվող երաշխավորությունների հստակ ցանկը: Դրանք պետք է հնարավորինս իրատեսական լինեն՝ ընդգծելով, թե Ձեր պահանջի համաձայն ՆԿ-ն ինչ գործողություններ կատարելու կոչ պետք է անի պատասխանող պետությանը:

2.1.2.3. ՀԿ-ների ներգրավման ժամկետները

Վճռի կատարման գործընթացին արդյունավետ ներգրավվածություն ունենալու համար խիստ կարևոր է, որպեսզի ՀԿ-ները ծանոթ լինեն գործընթացի ժամանակացույցին և գործի/գործերի զարգացումներին կանոնավոր կերպով հետևեն՝ օգտվելով [Վճիռների կատարման վարչության կայքէջից](#):

Վճիռների կատարման գործընթացի ժամանակացույցն ամփոփ կարելի է բնութագրել հետևյալ կերպ.

- Երբ վճիռը վերջնական է դառնում, գործը վերահսկողության համար փոխանցվում է ՄԻԵԴ-ից ՆԿ-ին:
- Գործով վճռի վերջնական դառնալուց հետո 2-3 ամսվա ընթացքում Վճիռների կատարման վարչությունը որոշում է, թե արդյոք գործն առաջատար է թե կրկնվող:
- Եթե գործը ճանաչվում է առաջատար գործ, ապա ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված հաջորդ եռամսյակային նիստի ժամանակ որոշում է կայացվում գործը ստանդարտ ընթացակարգից հավելյալ ընթացակարգ փոխադրելու մասին: Եթե գործը ճանաչվում է կրկնվող գործ, ապա այն ինքնաբերաբար հայտնվում է այն առաջատար գործի ընթացակարգի ներքո, որին կցագրվում է գործը:
- Հնարավորինս շուտ, սակայն՝ ցանկացած պարագայում վճռի վերջնական դառնալուց հետո վեց ամսվա ընթացքում պետությունը պարտավոր է ներկայացնել գործողությունների ծրագիր կամ, եթե համարում է, որ գործողությունների ծրագիր անհրաժեշտ չէ, ապա՝ գործողությունների զեկույց:
- Գործողությունների ծրագիրը ներկայացնելուց հետո Վճիռների կատարման վարչությունը նախնական կարգով գնահատում է նախատեսված միջոցները և առաջարկված ժամանակացույցը և անհրաժեշտության դեպքում լրացուցիչ տեղեկությունների և պարզաբանման համար կապվում է ազգային իշխանությունների հետ:

- Դրանից հետո ներկայացվում են գործողությունների լրացուցիչ ծրագրեր՝ այնքան ժամանակ, մինչև պետությունը վերջնականապես համարի, որ արդեն ի վիճակի է ներկայացնել գործողությունների իր զեկույցը՝ ՆԿ-ին առաջարկելով փակել գործի նկատմամբ վերահսկողությունը:
- Վճիռների կատարման վարչությունը վերջնական կարգով գնահատում է գործողությունների զեկույցը՝ այն ներկայացնելուց հետո առավելագույնը վեցամսյա ժամկետում: Եթե Վճիռների կատարման վարչությունն համաձայն է, որ իրագործված միջոցը պատշաճ է և բավարար, այն առաջարկում է, որպեսզի ՆԿ-ն ընդունի բանաձև, որով կավարտի իր կողմից գործի նկատմամբ վերահսկողությունը:

Ելնելով վերոգրյալից՝ ՀԿ-ների ներգրավումը ցանկալի է կազմակերպել հետևյալ ֆայլերով.

Վճիռի անմիջապես հետո.

- Սկսել առաջարկներ մշակել անհատական և ընդհանուր միջոցների վերաբերյալ, և հավաքել համանման այլ շարունակվող խախտումների վերաբերյալ տեղեկություններ:
- Պարբերաբար ուսումնասիրել [HUDOC-EXEC database](#) շտեմարանը՝ մինչև որ Վճիռների կատարման վարչությունը տեղեկություն հրապարակի այն մասին, թե արդյոք գործը ճանաչվել է «առաջատար» կամ «կրկնվող»:

Եթե գործը ճանաչվել է «առաջատար» գործ, ապա.

- Կապ հաստատել համապատասխան կառավարական պաշտոնատար անձանց հետ՝ նպատակ ունենալով առաջարկներ ներկայացնել գործողությունների ծրագրի մշակման վերաբերյալ:
- Գործողությունների ծրագրի հրապարակումից հետո, իսկ եթե անհրաժեշտ է համարվում՝ հրավորինս շուտ, 9.2 կանոնի հիման վրա տեղեկանք ներկայացնել՝ դրանում անդրադառնալով բոլոր մտահոգիչ խնդիրներին:

Եթե գործը ճանաչվել է «կրկնվող» գործ, ապա.

- 9.2 կանոնի հիման վրա տեղեկանք ներկայացնել ՆԿ-ին՝ անդրադառնալով տվյալ խմբի առաջատար գործի վերաբերյալ կառավարության վերջին գործողությունների ծրագրին, և ՆԿ-ի ուշադրությանը ներկայացնելով կրկնվող գործին վերաբերող անհատական միջոցներին առնչվող բոլոր խնդիրները:

Այդ պահից սկսած՝ ոստ անհրաժեշտության և պատշաճ հաճախականությամբ տեղեկանքներ ներկայացնել, որոնցում կանդրադառնա.

- Այն զարգացումներին, որոնց մասին անհրաժեշտ է հաղորդել ՆԿ-ին:
- Գործողությունների թարմացված ծրագրերին:
- Գործողությունների զեկույցին:

Գործողությունների առաջին ծրագիրն հրապարակելուց հետո գործին հետամուտ լինելու համար կարող են ընտրվել տարբեր ֆայլեր՝ կախված նրանից, թե արդյոք գործը ենթակա է ստանդարտ թե հավելյալ վերահսկողության:

Հավելյալ վերահսկողության ենթակա գործերը

ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված նիստերը նախապատրաստվում են հետևյալ գործընթացով.

- ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված նախորդ նիստից անմիջապես հետո հրապարակվում են այն գործերի նախնական ցանկերը, որոնք քննարկվելու են ՆԿ-ի մարդու

իրավունքներին նվիրված հաջորդ նիստի ժամանակ:

- Նիստից մոտ երկու ամիս առաջ Վճիռների կատարման վարչությունն սկսում է «օրակարգի ծանոթագրություններ» պատրաստել այն գործերի վերաբերյալ, որոնք նախատեսվում է քննարկել նիստի ժամանակ: Այդ ծանոթագրությունները պարունակում են գործերի և ծագող խնդիրների վերաբերյալ համառոտ տեղեկություններ, ինչպես նաև յուրաքանչյուր գործի վերաբերյալ ՆԿ-ի որոշման նախագիծը: Դրանք բաժանվում են նիստի նյութերի հետ միասին, որոնք վերջնականացվում են նիստից երկու շաբաթ առաջ և տեղեկատվության կարևոր աղբյուր են ՆԿ-ի անդամների համար:
- Պետությունները գործողությունների ծրագիրը/զեկույցը սովորաբար ներկայացնում են նախքան նիստը: Դրա ժամկետը տարբեր է լինում, սակայն որպես կանոն դա լինում է նիստից 8-12 շաբաթ առաջ:
- Նիստից երկու շաբաթ առաջ օրակարգը վերջնական է դառնում, և «օրակարգի ծանոթագրություններն» ուղարկվում են ՆԿ-ի անդամներին:

Հարկ է նշել, որ ցանկացած գործ 12 ամսվա ընթացքում մեկ անգամից ավելի քննարկելն արտառոց երևույթ է: Բացի դրանից, հավելյալ վերահսկողության ենթակա գործերի դեպքում ՆԿ-ի որոշումներում երբեմն նշվում է, թե ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված որ նիստի ժամանակ է կրկին ուսումնասիրվելու այդ գործը:

Վերոհիշյալից ակնհայտ է դառնում, որ հավելյալ վերահսկողության ներքո գտնվող գործի վերաբերյալ ՀԿ-ի տեղեկանքի արդյունավետությունն առավելագույնի հասցնելու համար այն պետք է ներկայացնել ժամանակին, որպեսզի տեղեկանքն հիշատակված լինի «օրակարգի ծանոթագրություններում»: Դա Վճիռների կատարման վարչությանը թույլ է տալիս հաշվի առնել տեղեկանքը գործի իրավիճակը վերլուծելիս՝ այդպես ապահովելով, որպեսզի ՀԿ-ի ներկայացրած տեղեկությունները՝ այնքանով, որքանով դրանք էական կհամարվեն, հասնեն ՆԿ-ի անդամների ուշադրությանը: Ուստի, ՀԿ-ի տեղեկանքը ցանկալի է ուղարկել օրակարգը և նիստի նյութերը վերջնականացնելուց բավական երկար ժամանակ առաջ: **Վճիռների կատարման վարչությունը խորհուրդ է տալիս դրանք ներկայացնել նիստից առնվազն վեց շաբաթ առաջ**, սակայն՝ ամենաուշը նիստից չորս շաբաթ առաջ:⁶ Որոշ հանգամանքներում օգտակար կլինի նաև, եթե ՀԿ-ի տեղեկանքն անմիջականորեն ուղարկվի համապատասխան կառավարական մարմին:

Ժամկետի հարցն հաճախ դժվարության առաջ է կանգնեցնում ՀԿ-ներին, քանի որ նրանք սովորաբար ցանկանում են պատասխանել պետության գործողությունների ծրագրին/զեկույցին, որի ժամկետն անորոշ է, իսկ երբեմն՝ այնպիսին, որ դժվար կդառնա տեղեկանքը ներկայացնել Վճիռների կատարման վարչության կողմից երաշխավորված ժամկետներում:

Որպես հնարավոր լուծում՝ ՀԿ-ները կարող են երկու տեղեկանք ներկայացնել. առաջին տեղեկանքում կշարադրվեն նոր զարգացումները կամ մեկնաբանությունները, որոնք ՀԿ-ն կցանկանա ներկայացնել ՆԿ-ին նիստից առնվազն վեց 6 շաբաթ առաջ, իսկ հաջորդ տեղեկանքը՝ պետության գործողությունների ծրագրի ներկայացումից հետո հնարավորինս կարճ ժամկետում անդրադառնալով այն լրացուցիչ մտահոգություններին, որոնք ծագել են պետության գործողությունների ծրագրի կապակցությամբ:

ՀԿ-ներից ստացված տեղեկանքներն անմիջապես ներկայացվում են տվյալ պատասխանող պետության ուշադրությանը: **Պատասխանող պետությանն հինգ աշխատանքային օր է տրվում պատասխանելու համար:** Պետության պատասխանի ստացումից հետո թե՛ ՀԿ-ի տեղեկանքը, թե՛

⁶ Նույն կանոնները կիրառելի են հաշտության համաձայնությունների նկատմամբ:

պետության պատասխանը ներկայացվում են ՆԿ-ի ուշադրությանը և հրապարակվում են ՆԿ-ի կայքէջում և HUDOC-EXEC կայքէջում:

Եթե անդամ պետությունը նշված հնգօրյա ժամկետում պատասխան չի ուղարկում, տեղեկանքը փոխանցվում է ՆԿ-ին, սակայն չի հրապարակվում: Փոխարենը՝ այն հրապարակվում է պետությանն ուղարկված ծանուցումից 10 աշխատանքային օր անց՝ այդ ժամկետում պետությունից պատասխան ստանալու դեպքում պատասխանի հետ մեկտեղ: Անդամ պետության պատասխանն այդ 10 աշխատանքային օրվանից հետո ստացվելու դեպքում շրջանառվում և հրապարակվում է առանձին՝ ստանալուն պես:

Այդ ժամկետների պարագայում ստացվում է, որ ՀԿ-ի տեղեկանքը, որը նախատեսված է ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված կոնկրետ նիստի համար, պետք է ուղարկվի նիստից առնվազն 10 աշխատանքային օր առաջ (հինգ օր անդամ պետության պատասխանի համար, հինգ օր՝ որպեսզի ՆԿ-ի անդամները հասցնեն ծանոթանալ տեղեկանքի հետ): Դա նաև թույլ կտա ապահովել տեղեկանքի հրապարակումը նախքան նիստի մեկնարկը: Այնուհանդերձ, նման ուշ փուլում ուղարկվող տեղեկանքն արդեն հնարավոր չի լինի ներառել նիստի «օրակարգի ծանոթագրություններում»:

Ստանդարտ վերահսկողության ենթակա գործերը

Ստանդարտ վերահսկողության ենթակա գործերի պարագայում ժամանակացույց չկա, և վերահսկողությունն իրականացվում է «կուլիսների ետևում»՝ Վճիռների կատարման վարչության և պետության միջև: Վճիռների կատարման վարչությունը ժամանակ առ ժամանակ թարմ տեղեկություններ է հրապարակում գործի «կատարման ընթացքի» (status of execution) էջում՝ [HUDOC-EXEC կայքէջում](#): ՀԿ-ները պետք է կանոնավոր մոնիթորինգ իրականացնեն գործերի նկատմամբ, որպեսզի տեսնեն պետության գործողությունների ծրագրերը/զեկույցները և պատասխանեն դրանց:

Գործողությունների զեկույցները

Ինչպես արդեն նշվեց, երբ պետությունը գործողությունների զեկույց է ներկայացվում, դրանում առաջարկում է փակել գործի նկատմամբ վերահսկողությունը: ՀԿ-ները պետք է սերտորեն հետևեն այն գործերի ընթացքին, որոնք իրենց կարծիքով լիարժեքորեն չեն կատարվեն, ինչպես նաև՝ կանոնավոր մոնիթորինգ իրականացնեն [HUDOC-EXEC կայքէջի](#) նկատմամբ (օրինակ՝ ամիսը մեկ անգամ), որպեսզի տեսնեն պետության գործողությունների ծրագրերը/զեկույցները, և երբ պետությունը ներկայացնում է տեսնեն պետության գործողությունների զեկույց, հրատապ կարգով տեղեկանք ուղարկեն՝ հիմնավորելով, թե ինչու է դեռևս վաղաժամ գործը փակելու համար:

Հաշվի առնելով, որ ստանդարտ վերահսկողության ենթակա գործերը կարող են փակվել ՆԿ-ի ցանկացած հերթական նիստի ժամանակ՝ գործողությունների զեկույց ներկայացնելուց հետո, խորհուրդ է տրվում, որպեսզի 9-րդ կանոնի հիման վրա գրավոր տեղեկանք ներկայացնելու ցանկության դեպքում ՀԿ-ները կապվեն «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպության քարտուղարության հետ (contact@einnetwork.org) և տեղեկացնեն գործի փակման ընդդիմանալու իրենց մտադրության մասին:

Վճիռների կատարման գործընթացի վրա ՀԿ-ների տեղեկանքների ազդեցության գնահատումը

ՀԿ-ները կարող են միջամտությունից հետո ուսումնասիրել, թե արդյոք իրենց մեկնաբանությունները կամ իրենց առաջ քաշած մտահոգություններն արտացոլվել են գործի «կատարման ընթացքի» (status of execution) էջում՝ [HUDOC-EXEC կայքէջում](#), իսկ հավելյալ վերահսկողության ներքո գտնվող գործերի դեպքում՝ թե արդյոք դրանք արտացոլված են ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված

համապատասխան նիստի ժամանակ ՆԿ-ի կայացրած որոշման տեքստում: ՀԿ-ի տեղեկանքի վերաբերյալ պետության տված պատասխանի հիմնավորվածությունը կամ չհիմնավորվածությունը նույնպես տեղեկությունների օգտակար աղբյուր է, հատկապես երբ պետությունը չի կարողանում վիճարկել ՀԿ-ի ներկայացրած երաշխավորությունների պատճառաբանվածությունը կամ ՀԿ-ի ներկայացրած տվյալների ճշգրտությունը:

2.1.2.4. Կանոնակարգի 9.2 կանոնի համաձայն ներկայացվող տեղեկանքների լրացուցիչ հասցեատերերը

Օգտակար կլինի, եթե ՀԿ-ների տեղեկանքների պատճենն ուղարկվի ինստիտուցիոնալ այլ շահակիցներին, ինչպիսիք են, օրինակ, ԵԽՏԿ-ի իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովը և Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարը: Դրանց պատճենը կարելի է ուղարկել նաև ՄԱԿ-ի Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին, ՄԱԿ-ի համապատասխան հատուկ ընթացակարգերին (օրինակ՝ խոշտանգման կամ ռասիզմի հարցերով զեկուցողներին և այլն) և այլոց, օրինակ՝ ԵԱՀԿ-ի Ազգային փոքրամասնությունների հարցերով գերագույն հանձնակատարին:

Ցանկալի է, մասնավորապես, որպեսզի ՀԿ-ները դիտարկեն պատճենը ԵՄ հանձնաժողովի համապատասխան վարչություններին ուղարկելու նպատակահարմարությունը: ԵՄ-ն զորեղ կառույց է, որը տարբեր պատճառներով կարող է լրացուցիչ ճնշում գործադրել տարբեր պետությունների վրա: Այդ վարչությունների ընտրությունը կախված է կոնկրետ պետությունից:

- **ԵՄ անդամ պետությունների դեպքում DG JUST.** Եվրամիության արդարադատության վարչությունն ուսումնասիրում է ԵՄ անդամ պետությունների համապատասխանությունն իրավունքի գերիշխանության պահանջներին: Ուսումնասիրության ամենախիստ մակարդակը, որն ի վերջո կարող է հանգեցնել պատժամիջոցների, Եվրոպական միության համաձայնագրի 7-րդ հոդվածով նախատեսված ընթացակարգն է, որը սույն Ձեկույցը մշակելու ժամանակ կիրառվում էր Լեհաստանի և Հունգարիայի նկատմամբ: Այնուհանդերձ, նշված վարչությունը նվազ խստապահանջ ուսումնասիրություններ նույնպես իրականացնում է տարբեր պետություններում, մասնավորապես՝ ԵՄ մոտ 14 պետությունների դեպքում ներկայումս մշտադիտարկվում է իրավունքի գերիշխանության պահանջների կատարումը: ՄԻԵԴ-ի դատավճիռների կատարումն Էական նշանակություն ունի այդ ուսումնասիրության գործընթացում: ԵՄ-ի կողմից իրավունքի գերիշխանության վերաբերյալ կատարվող ուսումնասիրությունները ներկայումս լրամշակվում և կատարելագործվում են:

Այսպիսով, տեղեկանքները պետք է ուղարկել հետևյալ հասցեներով՝ կախված գործի տեսակից.

- **Իրավունքի գերիշխանության հարցերով.** Niovi RINGOU, Head of Unit at DG JUST C.1 (Justice policy and rule of law), e-mail: niovi.ringou@ec.europa.eu
- **Քրեական իրավունքի հարցերով՝ արդար դատաբանություն.** Isabelle PERIGNON, Head of Unit at DG JUST B.2 (Procedural criminal law), e-mail: isabelle.perignon@ec.europa.eu
- **Խտրականության բացառում, փոքրամասնությունների իրավունքներ՝ ներառյալ ԼԳԲՏԻ անձինք և էթնիկ փոքրամասնություններ (հատկապես՝ ռոմա).** Szabolcs SCHMIDT, Head of Unit at DG JUST D.1 (Non-discrimination and Roma coordination), e-mail: szabolcs.schmidt@ec.europa.eu
- **Հիմնարար իրավունքների հետ կապված ցանկացած այլ գործ.** Barbara NOLAN, Head of Unit at DG JUST C.2 (Fundamental rights policy), e-mail: barbara.nolan@ec.europa.eu

Գործերի բոլոր տեսակների դեպքում տեղեկանքները պետք է ուղարկել նաև Աննա Պերեգոյին (anna.perego@ec.europa.eu), ով կվերահսկի դրանց տարածումը գլխավոր տնօրինության շրջանակում:

- **ԵՄ անդամակցության գործընթացում գտնվող պետությունների դեպքում՝ DG NEAR.** անդամակցության ընթացակարգի շրջանակում պետությունները պարտավոր են համապատասխանել ՄԻԵԿ-ի արժեքներին և ստանդարտներին: Այս պարտավորության կատարումը (և առաջընթացը՝ բոլոր այլ առումներով) ենթակա է ամենամյա մոնիթորինգի, որի հիման վրա կազմվում են զեկուլցներ: Ուստի, ցանկալի կլիներ այս վարչությանը տեղեկացված պահել համապատասխան պետությունների վերաբերյալ ՄԻԵԿ-ի դատավճիռների կատարման ընթացքի մասին: Տեղեկանքները պետք է ուղարկել Յիմսարար իրավունքների քաղաքականության հարցերով պատասխանատու Վիկտորիա Կոռեային (Policy Officer for Fundamental Rights, Victoria Correa, victoria.correa@ec.europa.eu):
- **ԵՄ-ից դուրս գտնվող այն պետությունների համար, որոնք անդամակցության կամ նախաանդամակցային թեկնածուներ չեն՝ Եվրոպական արտաքին գործերի ծառայությանը (EEAS).** EEAS-ը պատասխանատու է Արևելյան գործընկերության հետ կապված հարցերով, որը ներառում է Հայաստանը, Ադրբեյջանը, Վրաստանը, Մոլդովան և Ուկրաինան (ինչպես նաև Բելառուսը): Գործընկերության շրջանակում պետությունները պետք է հարգեն ԵՄ-ի հիմնարար արժեքները, որոնց թվում են մարդու իրավունքները և իրավունքի գերիշխանությունը: Դա հատկապես կարևոր է այն պետությունների համար, որոնք ի վերջո հույս ունեն անդամակցել ԵՄ-ին: Այս խմբին պատկանող պետությունների վերաբերյալ տեղեկանքների պատճենը պետք է ուղարկել Եվրոպայի խորհրդում Եվրոպական միության պատվիրակությանը (delegation-strasbourg-1@eeas.europa.eu)՝ առանձին պետություններում ԵՄ-ի պատվիրակություններին ուղարկելուց զատ:

Տեղեկանքի պատճենը որևէ լրացուցիչ կառույցի ուղարկելիս խորհուրդ ենք տալիս մեկ-երկու նախադասությամբ նկարագրել, թե ինչու է այդ փաստաթուղթը կարևոր նրանց աշխատանքում: Օրինակ, DG NEAR տնօրինությանն ուղարկվող էլեկտրոնային նամակում կարելի է նշել, որ պետության կողմից տվյալ գործի վերաբերյալ դատավճիռը չկատարել էական նշանակություն ունի DG NEAR տնօրինության կողմից տվյալ պետության՝ հիմնարար իրավունքների ստանդարտների պահպանումը գնահատելիս՝ անդամակցության գործընթացի շրջանակներում: Եվրոպայի խորհրդի Մարդու իրավունքների հանձնակատարին ուղարկվող նամակի մեջ կարելի է նշել, օրինակ, որ Հանձնակատարը պետք է տվյալ երկրում մարդու իրավունքների վիճակն ուսումնասիրելիս հաշվի առնի տվյալ գործով կայացված դատավճիռի չկատարման փաստը:

2.2. Շահերի պաշտպանության այլ ճանապարհներ Ստրասբուրգում

ՆԿ-ի կանոնակարգի 9-րդ կանոնի հիման վրա գրավոր տեղեկանքներ պատրաստելուց զատ ՀԿ-ները կարող են ուղղակիորեն աշխատել ՆԿ-ում մշտական ներկայացուցիչների հետ: Այդ աշխատանքի շնորհիվ ՀԿ-ները կարող են սատարող պետություններին անմիջականորեն ներկայացնել իրենց դիրքորոշումները, որի շնորհիվ այդ պետություններն ավելի լավ են հասկանում ՀԿ-ներին մտահոգող խնդիրները, և աճում է նրանց գործողություններում ՀԿ-ի առաջարկներին սատարելու հավանականությունը: «Կատարման եվրոպական ցանց» («The European Implementation Network», «EIN») կազմակերպությունը կարող է աջակցել ՀԿ-ներին՝ հանդես գալով որպես հարթակ նման շփումների համար՝ թե՛ կազմակերպելով ժողովներ կամ ոչ պաշտոնական քննարկումներ

Ստրասբուրգում, թե՛ տրամադրելով Ստրասբուրգում գործող համապատասխան պաշտոնատար անձանց կապի տվյալները:

ՅԿ-ների ճեպագրույցները ՆԿ-ի համար

«Կատարման եվրոպական ցանց» կազմակերպությունը ոչ ֆորմալ հանդիպումներ է կազմակերպում ՆԿ-ի անդամների համար՝ ՆԿ-ի մարդու իրավունքներին նվիրված եռամսյակային նիստերից մոտ երկու շաբաթ առաջ, որում նրանց ներկայացվում են քաղաքացիական հասարակության դիրքորոշումները նիստի ժամանակ ուսումնասիրվելիք որոշ գործերի վերաբերյալ:

Այդ ճեպագրույցներին սովորաբար մասնակցում են մոտ 25 մշտական ներկայացուցչությունների աշխատողներ: Ներկայացվում է 3-5 գործ: Դա յուրատիպ հնարավորություն է, որպեսզի մշտական ներկայացուցչությունների աշխատողներն ուղղակիորեն ՅԿ-ներից լսեն գործերի կատարման ընթացքի վերաբերյալ, ՆԿ-ի ուշադրությունն հրավիրելով այդ գործերին, և ՅԿ-ներին թույլ տալով անմիջականորեն մասնակցել ստրասբուրգյան գործընթացին:

ՅԿ-ների ներկայացուցիչները, ովքեր մասնակցում են այս ճեպագրույցներին, պետք է ձգտեն շատ հստակ վերլուծություններ շարադրել կատարման ընթացքի վերաբերյալ՝ միաժամանակ 3-5 գործնական երաշխավորություն տալով ընդհանուր միջոցները բարելավելու մասին, կամ առաջ քաշելով կատարման առաջընթացին վերաբերող հիմնախնդիրները: Այդ պարագայում ավելի հավանական է, որ ՅԿ-ների տրամադրած տեղեկությունները կներառվեն մշտական ներկայացուցչությունների գնահատումներում և կուղարկվեն համապատասխան պետությունների մայրաքաղաքներ, որտեղ դրանք հաշվի կառնվեն անդամ պետության կողմից կայացվող որոշումների ընդհանուր գործընթացում:

Այդ ճեպագրույցների ընթացքում քննարկված բոլոր գործերի վերաբերյալ մանրակրկիտ տեղեկություններ կարելի է գտնել «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպության կայքէջում [NGO Briefings](#) բաժնում:

Երկկողմ հանդիպումները ՆԿ-ի, Վճիռների կատարման վարչության և ԵԽ-ի այլ մարմինների հետ

Ստրասբուրգում գտնվելու ընթացքում ՅԿ-ներին խորհուրդ է տրվում նաև հանդիպում ունենալ Վճիռների կատարման վարչության այն աշխատողների հետ, ովքեր պատասխանատու են ՅԿ-ների աշխատանքում ներկայացված գործի/գործերի համար: Վճիռների կատարման վարչության աշխատողները պատասխանատվություն են կրում կոնկրետ պետությունների գործերի համար, և ինչպես և կարելի էր ակնկալել, նրանք լիովին տեղյակ են այդ գործերի կատարման ընթացքի մասին: Նրանք կանոնավոր շփումների մեջ են համապատասխան պետության կառավարության պաշտոնատար անձանց հետ և ողջունելի են համարում թարմ տեղեկությունների տրամադրումն ՅԿ-ների կողմից:

ՅԿ-ների համար կարող են օգտակար լինել նաև հանդիպումները **ՆԿ-ում պատվիրակությունների ներկայացուցիչների** հետ, ովքեր խորապես շահագրգռված են ՄԻԵԴ-ի վճիռների լիարժեք և արդյունավետ կատարման հարցով:

Մարդու իրավունքների հանձնակատարի գրասենյակը գնալով ավելի ակիվորեն է ներգրավվում կատարման գործընթացներին և կարող է արժարժել համապատասխան հարցերը տարբեր հարթակներում, օրինակ՝ առանձին պետություններ կատարվող այցերի շրջանակում, զեկույցների տեքստում և այլ հրապարակումներում:

ԵԽԽՎ-ի իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովը և ՄԻԵԴ-ի վճիռների կատարման հարցերով ԵԽԽՎ-ի զեկուցողը մի քանի տարին մեկ անգամ զեկույցներ են հրապարակում ՄԻԵԴ-ի վճիռների կատարման մասին՝ հաճախ հենվելով քաղաքացիական հասարակության տրամադրած տեղեկությունների վրա: Այդ զեկույցները սովորաբար անդրադառնում են այն գործերին, որոնցով կատարման լուրջ խնդիրներ են ծագում, ինչպես նաև՝ այն վճիռներին, որոնք վերաբերում են առանձնապես ծանր խախտումներին: Կատարման խնդիրներով զբաղվելու համար Նախարարների կոմիտեն նաև լսումներ է իրականացնում և այցելում առանձին պետություններ: «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպությունը կարող է օգնել ՀԿ-ներին՝ տրամադրելով կապի տվյալները և ծանոթացնելով նրանց ԵԽԽՎ-ի քարտուղարության աշխատողների հետ: Կատարման մասին ԵԽԽՎ-ի բոլոր զեկույցները կարելի է գտնել ստորև՝ «Փաստաթղթերի ցանկում»:

ԵԽԽՎ-ի պատվիրակներն իրավունք ունեն գրավոր հարցեր ուղղել ՆԿ-ին՝ ԵԽԽՎ-ի լիազորությունների մեջ մտնող հարցերի վերաբերյալ:⁷ Դրանք ջատագովության լրացուցիչ հնարավորություններ են ընձեռում: ՆԿ-ն հնարավորության դեպքում պատասխանում է երեք ամսվա ընթացքում: Պատասխանի տեքստը միաձայն քվեարկությամբ հաստատվում է ՆԿ-ում:⁸ Դա նշանակում է, որ քննադատվող պետությունը կարող է արգելափակել պատասխանը: Պատասխանները կարող են բավական սահմանափակ տեղեկություններ պարունակել: Գրավոր հարցերը, սակայն, կարող են արժեքավոր լինել՝ կոնկրետ գործի կատարման խնդիրների վրա ՆԿ-ի անդամների ուշադրությունն հրավիրելու տեսանկյունից:⁹ Հարցերը կարելի է առաջադրել նաև ուղղակիորեն ՆԿ-ի նախագահին, և այդ դեպքում միաձայն ընդունելու պահանջ չկա:

⁷ Խորհրդարանական վեհաժողով, *Վեհաժողովի կանոնակարգը*, Կանոն 61՝ Նախարարների կոմիտեին ուղղվող հարցերը:

⁸ Նախարարների կոմիտե, *Աշխատակարգերը և աշխատանքային մեթոդները*, ix. Հարաբերությունները Եվրոպայի խորհրդի այլ մարմինների, պետությունների, միջազգային կազմակերպությունների և ոչ միջկառավարական կազմակերպությունների հետ, 1.5.1 ՆԿ-ին հասցեագրված գրավոր հարցերը:

⁹ ԵԽԽՎ-ի պատվիրակների ցանկի համար տե՛ս. <http://www.assembly.coe.int/nw/xml/AssemblyList/MP-Alpha-EN.asp>

3. Ինչպես կարող է օգնել «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպությունը (EIN)

«Կատարման եվրոպական ցանց» կազմակերպությունը (EIN) աշխատում է ԵՄ ողջ տարածաշրջանում իր ունեցած [անդամների և գործընկերների](#)՝ իրավաբանների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և համայնքների հետ, նպատակ հետապնդելով ջատագովել ՄԻԵԴ-ի վճիռների լիարժեք և ժամանակին կատարումը: Տեղակայված լինելով Ստրասբուրգում՝ «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպությունը կենտրոնական հանգույց է եվրոպայի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների համար և աջակցում է եվրոպայի խորհրդի կառույցների հետ նրանց համագործակցությանը:

Ի թիվս այլ աշխատանքների՝ «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպությունը ՀԿ-ների պարբերական ճեպագրույցներ է կազմակերպում ՆԿ-ի հետ ([տե՛ս ՀԿ-ների ճեպագրույցները ՆԿ-ի համար, էջ 23](#)), որը վերահսկում է մարդու իրավունքներին վերաբերող վճիռների կատարումը: Ճեպագրույցները, որոնք սովորաբար տեղի են ունենում մարդու իրավունքներին նվիրված նիստերից կարճ ժամանակ առաջ, նպատակ ունեն ՆԿ-ին տեղեկում գործող քաղաքացիական հասարակության կազմակերպություններից ստացվող թարմ տեղեկություններ փոխանցել կոնկրետ գործերի առաջընթացի մասին: Ճեպագրույցների տեղեկությունները և փաստաթղթերն հրապարակվում են [այստեղ](#):

«Կատարման եվրոպական ցանց» կազմակերպությունը կարող է նաև օգնել ՀԿ-ներին ՆԿ-ի, վճիռների կատարման վարչության և ԵՄ-ի այլ մարմինների հետ երկկողմ հանդիպումներ կազմակերպելու հարցում ([տե՛ս Երկկողմ հանդիպումները ՆԿ-ի, վճիռների կատարման վարչության և ԵՄ-ի այլ մարմինների հետ, էջ 23](#)):

4. Կատարման գործիքակազմ ՅԿ-ների համար

Առկա է նաև «Կատարման եվրոպական ցանց» կազմակերպության (EIN) կայքէջում «Resources» բաժնում:

Նախարարների կոմիտեի փաստաթղթեր.

1. [HUDOC EXEC database](#) շտեմարանը՝ նվիրված ՄԻԵԴ-ի բոլոր վճիռների կատարմանը
2. [ՆԿ տարեկան զեկույցները](#). Նվիրված են ՄԻԵԴ-ի վճիռների և որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությանը
3. [Նախարարների կոմիտեի կանոնադր.](#) Նվիրված է վճիռների կատարման և հաշտության համաձայնությունների պայմանների նկատմամբ վերահսկողությանը, ընդունվել է 2006 թվականի մայիսի 10-ին, փոփոխվել է 2017 թվականի հունվարի 18-ին
4. [Նախարարների կոմիտեի iGuide](#). Նվիրված է ընթացակարգերին և աշխատանքի մեթոդներին
5. [Պետությունների վերաբերյալ փաստաթղթեր](#). Նվիրված են ՄԻԵԴ-ի վճիռների կատարմանը:
6. Նու երաշխավորություններ.
 - [Վճիռների արագ կատարման ներպետական արդյունավետ կարողությունների մասին \(Rec\(2008\)2, 6-ը փետրվարի, 2008 թ.\)](#)
 - [Իրավական պաշտպանության ներպետական միջոցների բարելավման մասին \(Rec\(2004\)6, 12-ը մայիսի, 2004 թ.\)](#)
 - [Որոշ գործերի վերանայումը և վերաբազումը ներպետական մակարդակում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռներից հետո](#) (R (2000) 2, 19-ը հունվարի, 2000 թ.)
7. [Բրյուսելյան հռչակագիրը](#). “Implementation of the European Convention on Human Rights, our shared responsibility”, 27-ը մարտի, 2015 թ.
8. Նու տեղեկատվական փաստաթուղթ. [‘Supervision of the execution of judgments and decisions of the European Court of Human Rights: implementation of the Interlaken Action Plan – Modalities for a twin-track supervision system’](#), CM/Inf/DH(2010)37
9. FCM Information Document [‘Monitoring of the payment of sums awarded by way of just satisfaction: an overview of the Committee of Ministers’ present practice’](#), CM/Inf/ DH(2008)7, 15-ը հունվարի, 2009 թ.
10. [Կոպենհագենյան հռչակագիրը](#) Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի բարեփոխման մասին, 13-ը ապրիլի, 2018 թ.

ԵԽԽԿ-ի զեկուցողների զեկույցները վճիռների կատարման մասին.

11. [9th Report on the Implementation of Judgments](#) of the European Court of Human Rights, by Mr. Pierre-Yves Le Borgn, 2017
12. [8th Report](#) on the Implementation of Judgments of the European Court of Human Rights, by Mr. Klaas de Vries, 2015
13. [Report](#) on the Implementation of Judgments of the European Court of Human Rights, Mr. Christos Pourgourides, 2010

ԵԽԽԿ-ի ուսումնասիրությունը վճիռների կատարման մասին, պատրաստել է Իրավական հարցերի և մարդու իրավունքների հանձնաժողովը.

14. [Impact of the European Convention on Human Rights in States Parties: selected examples](#), 8 January 2016

ԵՍԽՎ-ի բանաձևերը և երաշխավորությունները՝ կապված վճիռների կատարման հետ.

15. [Resolution 2178](#) (2017)
16. [Recommendation 2110](#) (2017)
17. [Recommendation 2079](#) (2015)
18. [Resolution 2075](#) (2015)
19. [Recommendations 1955](#) (2011)
20. [Resolution 1823](#) (2011)
21. [Resolution 1787](#) (2011)
22. [Resolution 1516](#) (2006)
23. [Resolution 1226](#) (2000)

Մարդու իրավունքների հանձնակատարը.

24. [«Non-implementation of the Court’s judgments: our shared responsibility»](#), Nils Muižnieks (August 2016)

Վենետիկի հանձնաժողովը.

25. [Comments on PACE Recommendation 2110](#) (2017) on the implementation of judgments of the European Court of Human Rights

5. Հավելվածներ

5.1. Հավելված 1 – մասնագիտական եզրույթների բառարան¹⁰

Գործողությունների ծրագիր – փաստաթուղթ, որում շարադրված են այն միջոցները, որոնք իրականացվել և/կամ նախատեսվել են պատասխանող պետության կողմից՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը կատարելու համար, մոտավոր ժամանակացույցի հետ մեկտեղ:

Գործողությունների զեկույց – զեկույց, որը պատասխանող պետության կողմից ներկայացվում է Նախարարների կոմիտեին՝ շարադրելով բոլոր միջոցները, որոնք ձեռնարկվել են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռը կատարելու համար, և/կամ այն պատճառները, որոնցից ելնելով անհրաժեշտ չեն լրացուցիչ միջոցներ:

46-րդ հոդվածի վճիռ (վճիռ, որում կան կատարման անչվող տեղեկություններ) – վճիռ, որով Դատարանը ձգտում է աջակցել պատասխանող պետությանը, որպեսզի վերջինս պարզի արձանագրված խախտումների պատճառները և դրանք հաղթահարելու համար ձեռնարկվելիք անհատական և/կամ ընդհանուր միջոցները:

Գործ – ընդհանրական եզրույթ, որը վերաբերում է Եվրոպական դատարանի վճռին (կամ որոշմանը):

Դասակարգման սպասող գործ – գործ, որի դասակարգումը՝ ստանդարտ թե՛ հավելյալ վերահսկողության ենթակա լինելու առումով, դեռևս չի որոշվել Նախարարների կոմիտեի կողմից:

CEPEJ – Արդարադատության արդյունավետության եվրոպական հանձնաժողով:

Գործի դասակարգում – Նախարարների կոմիտեի որոշում, որով սահմանվում է վերահսկողության ընթացակարգը՝ ստանդարտ թե՛ հավելյալ:

Փակված գործ – գործով, որով Նախարարների կոմիտեն ընդունել է վերջնական բանաձև, որում նշում է, որ կատարել է Կոնվենցիայի 46 § 2 և 39 § 4 հոդվածներով իրեն վերապահված լիազորությունները, և ուստի՝ փակում է տվյալ գործի ուսումնասիրությունը:

ՆԿ – Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեն:

ՆԿ կանոնակարգ – Նախարարների կոմիտեի կանոնակարգը, որը վերաբերում է վճիռների կատարման և հաշտության համաձայնությունների պայմանների նկատմամբ վերահսկողությանը: Ընդունվել է 2006 թվականի մայիսի 10-ին, փոփոխվել՝ 2017 թվականի հունվարի 18-ին:

ԵԽ – Եվրոպայի խորհուրդ:

Արդարացի փոխհատուցման վճարման վերջնաժամկետ – երբ Դատարանը գանգատաբերի համար

¹⁰ Մասնագիտական եզրույթների սույն բառարանի հիմքում ընկած է մասնագիտական եզրույթների այն բառարանը, որը ներառվել է Նախարարների կոմիտեի 11-րդ զեկույցի մեջ (*Supervision of the Execution of Judgments and Decisions of the European Court of Human Rights 2017, 11th Report of the Committee of Ministers*), Եվրոպայի խորհուրդ, մարտ 2018 թ., էջեր 53-56:

Նշանակում է արդարացի փոխհատուցում, ընդհանուր ժամկետ է նշում, որի դրությամբ պատասխանող պետությունը պարտավոր է վճարել նշանակված գումարները: Այդ ժամկետը սովորաբար վճռի վերջնական դառնալու օրվանից հաշված երեք ամիս է:

ՎԿՎ – ՄԻԵԴ-ի վճիռների կատարման վարչությունը:

ՄԻ ՆԻՍՏ – Նախարարների կոմիտեի նիստ, որը նվիրված է Եվրոպական դատարանի վճիռների և որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությանը: Անհրաժեշտության դեպքում Կոմիտեն կարող է նաև գործի կատարման ընթացքի մանրակրկիտ ուսումնասիրություն իրականացնել հերթական նիստի ընթացքում:

ՄԻԵԿ – Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա:

ECRI – Ռասիզմի և անհանդուրժողության դեմ եվրոպական հանձնաժողով:

ՄԻԵԴ – Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Հավելյալ վերահսկողության ընթացակարգ – վերահսկողության ընթացակարգ այն գործերի համար, որոնք ունեն հրատապ անհատական միջոցների կարիք, պիլոտային վճիռների համար, այն վճիռների համար, որոնք այլ առումով ի հայտ են բերում կառուցվածքային և/կամ համալիր էական խնդիրներ, որոնք արձանագրվել են ՄԻԵԴ-ի և/կամ Նախարարների կոմիտեի կողմից, և միջպետական գործերի համար: Այս ընթացակարգը պետք է Նախարարների կոմիտեին թույլ տա սերտորեն հետևել գործի կատարման առաջընթացին, ինչպես նաև՝ հեշտացնի հաղորդակցությունն ազգային իրավասու մարմինների հետ՝ կատարմանն աջակցելու նպատակով:

Վերջնական վճիռ – վճիռ, որի վերաբերյալ չի կարող ներկայացվել Եվրոպական դատարանի մեծ պալատին ներկայացվելու միջնորդություն: Վերջնական վճիռները պարտադիր պետք է կատարվեն պատասխանող պետության կողմից՝ Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո: Պալատի (7 դատավորի կազմով) կայացրած վճիռը վերջնական է դառնում. անմիջապես, եթե կողմերը հայտարարում են, որ չեն ներկայացնելու գործը Եվրոպական դատարանի մեծ պալատին ներկայացվելու միջնորդություն, կամ կայացումից երեք ամիս հետո, որպեսզի գանգատաբերը կամ պատասխանող պետությունն հնարավորություն ունենան պահանջել, որպեսզի գործը ներկայացվի Մեծ պալատին, կամ երբ Մեծ պալատը մերժում է գործը Մեծ պալատին ներկայացնելու մասին միջնորդությունը: Երբ վճիռը կայացվում է երեք դատավորից կազմված հանձնաժողովի կամ Մեծ պալատի կողմից, այն վերջնական է դառնում անմիջապես:

Վերջնական բանաձև – Նախարարների կոմիտեի որոշում, որով Նախարարների կոմիտեն որոշում է փակել վճռի կատարման նկատմամբ վերահսկողությունը՝ համարելով, որ պատասխանող պետությունն ընդունել է բոլոր միջոցները, որոնք անհրաժեշտ են Դատարանի արձանագրած խախտմանն արձագանքելու համար:

Հաշտության համաձայնություն – համաձայնություն գանգատաբերի և պատասխանող պետության միջև, որի նպատակն է վերջ տալ Դատարան ներկայացված գանգատին: Դատարանն հաստատում է հաշտության համաձայնությունը, եթե պարզում է, որ մարդու իրավունքների հարգումը չի արդարացնում գանգատի ընթացքը շարունակելը: Կայացվող որոշումն ուղարկվում է Նախարարների կոմիտեին, որը վերահսկում է հաշտության համաձայնության՝ որոշման մեջ շարադրված պայմանների կատարումը:

Ընդհանուր միջոցներ – միջոցներ, որոնք անհրաժեշտ են Դատարանի վճիռներում ի հայտ բերված՝ կառուցվածքային նշանակություն ունեցող քիչ թե շատ էական խնդիրները լուծելու համար, որպեսզի կանխվեն արձանագրված խախտումներին նման խախտումները կամ որպեսզի վերջ դրվի շարունակվող խախտմանը: Ընդհանուր միջոցների ընդունումը կարող է, մասնավորապես, ենթադրել օրենսդրության կամ դատական պրակտիկայի փոփոխություն կամ գործնական այնպիսի միջոցներ, ինչպիսին է բանտի վերանորոգումը, կադրերով համալրումը և այլն: Իրավական պաշտպանության արդյունավետ ներպետական միջոցների ապահովման պարտավորությունն ընդհանուր միջոցների կարևորագույն բաղադրիչ է (տե՛ս, մասնավորապես, Նախարարների կոմիտեի թիվ (2004)6 երաշխավորությունը): Այն գործերը, որոնցով լրջագույն կառուցվածքային խնդիրներ են ի հայտ բերվում, դասակարգվում են որպես հավելյալ վերահսկողության ընթացակարգի ենթակա գործեր:

Գործերի խումբ – երբ Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո գտնվող մի քանի գործեր վերաբերում են միևնույն խախտմանը կամ կապված են պատասխանող պետությունում առկա միևնույն կառուցվածքային կամ համակարգային հիմնախնդրի հետ, Նախարարների կոմիտեն կարող է որոշում կայացնել գործերը խմբավորելու և դրանց միասնաբար անդրադառնալու մասին: Խումբը սովորաբար կրում է կատարման վերահսկողության նպատակով Նախարարների կոմիտեին ուղարկված առաջին՝ «առաջատար» գործի անվանումը: Եթե դա պատշաճ է համարվում, ապա Նախարարների կոմիտե կարող է փոփոխել գործերի խմբավորումը, մասնավորապես՝ որպեսզի հնարավոր լինի փակել խմբի մեջ մտնող որոշ գործեր, որոնք կապված են կառուցվածքային կոնկրետ խնդրի հետևյալ որևէ արդեն լուծվել է (մասնակի փակում):

Անհատական միջոցներ – միջոցներ, որոնք պատասխանող պետության իշխանությունները պարտավոր են կատարել, որպեսզի հնարավորինս վերացնեն խախտումների հետևանքները գանգատաբերների համար, այսինքն՝ հնարավորինս վերականգնել խախտումից առաջ գոյություն ունեցած իրավիճակը («*restituti in integrum*»): Անհատական միջոցները ներառում են, օրինակ, անարդար քրեական վարույթների վերաբացումը կամ անձնական կյանքի իրավունքի խախտմամբ ձեռք բերված տեղեկությունների ոչնչացումը և այլն:

Միջանկյալ բանաձև – Նախարարների կոմիտեի կողմից ընդունվող որոշման տեսակ, որի նպատակն է հաղթահարել հատուկ ուշադրության կարիք ունեցող առավել համալիր իրավիճակները:

Մեկուսի գործ – գործ, որով արձանագրված խախտումներն ըստ երևույթին սերտորեն կապակցված են կոնկրետ հանգամանքների հետ, ուստի՝ ընդհանուր միջոցների անհրաժեշտություն դրանցով չի առաջանում:

Արդարացի փոխհատուցում – երբ Դատարանը Կոնվենցիայի 41-րդ հոդվածի ներքո համարում է, որ պատասխանող պետության ներպետական օրենսդրությունը թույլ չի տալիս լիարժեքորեն վերականգնել Կոնվենցիայի խախտման հետևանքով գանգատաբերին պատճառված հետևանքները, Դատարանը կարող է արդարացի փոխհատուցում նշանակել: Արդարացի փոխհատուցումն հաճախ լինում է դրամական գումարի տեսքով՝ որպես նյութական և/կամ բարոյական վնասի, ինչպես նաև՝ կրած ծախսերի և ծախքերի փոխհատուցում:

Առաջատար գործ – գործ, որը ճանաչվել է որպես կառուցվածքային և/կամ հաճախ նաև՝ համակարգային նոր հիմնախնդիրներ ի հայտ բերող գործ՝ կա՛մ Դատարանի կողմից անմիջականորեն վճռում, կա՛մ Նախարարների կոմիտեի կողմից կատարման նկատմամբ

վերահսկողություն իրականացնելու ընթացքում: Նման գործի համար անհրաժեշտ է նոր ընդհանուր միջոցներ ձեռնարկել՝ ապագայում նմանօրինակ այլ խախտումները կանխելու նպատակով: Առաջատար գործերը ներառում են նաև որոշ գործեր, որոնք կարող են հետագայում մեկուսի գործ ճանաչվել. նոր գործի «մեկուսի» բնույթը հաճախ սկզբում ակնհայտ չէ, և քանի դեռ այդ բնույթը չի հաստատվել, գործը դիտարկվում է որպես «առաջատար» գործ:

Մասնակի փակում – մեկ խմբի մեջ մտնող և կառուցվածքային խնդիրներ ի հայտ բերող որոշ գործերի փակումը՝ կատարված առաջընթացի տեսանելիությունը բարելավելու նպատակով, որը կարող է լինել կա՛մ համարժեք անհատական միջոցներ ընդունելու արդյունքում, կա՛մ խմբի մեջ ներառված կառուցվածքային խնդիրներից մեկը լուծելու արդյունքում:

Ընթացիկ գործ – գործ, որի կատարումը տվյալ պահին գտնվում է Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո:

Պիլոտային վճիռ – երբ Դատարանն արձանագրում է խախտում, որը բխում է կառուցվածքային և/կամ համակարգային հիմնախնդրից, որի պատճառով ծագել են կամ կարող են ծագել նույնանման գանգատներ ընդդեմ պատասխանող պետության, Դատարանը կարող է որոշում կայացնել պիլոտային վճռի ընթացակարգը կիրառելու մասին: Պիլոտային վճռում Դատարանը նշում է արձանագրված կառուցվածքային և/կամ համակարգային հիմնախնդրի բնույթը, ապա՝ ուղղենիշներ է տալիս հիմնախնդրի լուծման այն միջոցների մասին, որոնք պետք է ձեռնարկի պատասխանող պետությունը: Ի հակադրություն սովորական վճռի, որում ներառվում են միայն 46-րդ հոդվածից բխող՝ կատարմանն առնչվող տեղեկություններ, պիլոտային վճռի օպերատիվ դրույթներում կարող է սահմանվել տալիս հիմնախնդրի լուծման համար անհրաժեշտ միջոցների կատարման վերջնաժամկետը, ինչպես նաև՝ իրականացվելիք կոնկրետ միջոցները (հաճախ դա վերաբերում է իրավական պաշտպանության արդյունավետ ներպետական միջոց նախատեսելուն):

Ելնելով սուբսիդիարության սկզբունքից՝ պատասխանող պետությունն ազատ է համապատասխան միջոցների և միջոցառումների ընտրության հարցում, որոնցով վերացնելու է արձանագրված խախտումը և կանխելու է համանման խախտումներն ապագայում:

Կրկնվող գործ – գործը, որը կապված է Նախարարների կոմիտեում մեկ կամ մի քանի առաջատար գործերի համատեքստում նախկինում արդեն իսկ արձարծված կառուցվածքային և/կամ ընդհանուր հիմնախնդրի հետ: Կրկնվող գործերը սովորաբար խմբավորվում են առաջատար գործի հետ:

Ստանդարտ վերահսկողության ընթացակարգ – վերահսկողության ընթացակարգ, որը կիրառվում է բոլոր գործերի նկատմամբ, բացառությամբ երբ գործն ունի այնպիսի առանձնահատուկ բնույթ, որ այն անհրաժեշտ է ուսումնասիրել հավելյալ վերահսկողության ընթացակարգի ներքո: Ստանդարտ ընթացակարգն հիմնված է այն կարևորագույն սկզբունքի վրա, որ պատասխանող պետությունն է պարտավոր ապահովել Դատարանի վճիռների և որոշումների արդյունավետ կատարումը: Ուստի, այս ընթացակարգի շրջանակում Նախարարների կոմիտեն իր միջամտությունը սահմանափակում է՝ ընդամենը համոզվելով, որ գործողությունների համարժեք ծրագրեր/զեկույցներ ներկայացվել են, և պատշաճ ժամկետներում ստուգելով հայտարարված և/կամ իրականացված միջոցների համարժեքությունը: Ստանդարտ ընթացակարգի ներքո՝ գործերի կատարման զարգացումներին սերտորեն հետևում է Վճիռների կատարման վարչությունը, որը ստացված տեղեկությունները ներկայացնում է Նախարարների կոմիտեին, ինչպես նաև՝ առաջարկներ է ներկայացնում ձեռնարկվելիք գործողությունների մասին, եթե կատարման գործընթացի զարգացումներում անհրաժեշտ է դառնում Նախարարների կոմիտեի որոշակի միջամտությունը:

Փոխադրումը վերահսկողության մեկ ընթացակարգից մյուսը – գործը կարող է Նախարարների կոմիտեի կողմից ստանդարտ վերահսկողության ընթացակարգից փոխադրվել հավելյալ վերահսկողության ընթացակարգ (և հակառակը):

Միակողմանի հայտարարություն – պատասխանող պետության կողմից Դատարանին ներկայացված հայտարարություն, որում պետությունն ընդունում է Կոնվենցիայի խախտման փաստը և պարտավորվում է համարժեք միջոցներ ձեռնարկել խախտման հետևանքները վերացնելու ուղղությամբ՝ ներառյալ փոխհատուցման տրամադրումը գանգատաբերին: Նախարարների կոմիտեն չի վերահսկում միակողմանի հայտարարության մեջ ձևակերպված պարտավորությունների կատարումը: Ինդրի դեպքում գանգատաբերը կարող է միջնորդել, որպեսզի իր գանգատը կրկին ներառվի Դատարանի կողմից քննվող գանգատների ցանկում:

5.2. Հավելված 2 – ծանոթագրություն HUDOC-EXEC շտեմարանի մասին

[HUDOC-EXEC database](#) շտեմարանում (անգլերենով և ֆրանսերենով) ներառված են ՄԻԵԴ-ի վճիռների կատարման ընթացքին վերաբերող ամենաթարմ տեղեկությունները:

Գործերը կարելի է որոնել ըստ տարբեր չափորոշիչների՝ ներառյալ անվանումը և գանգատի համարը: Տրվում են համառոտ տվյալներ յուրաքանչյուր գործի վերաբերյալ, որից հետո առանձին բաժնով ներկայացվում է կատարման ընթացքը (ներառյալ թե՛ ընդհանուր միջոցները, թե՛ անհատական միջոցները): Միևնույն հիմնախնդիրը կամ համանման խնդիրներ արժարժող գործերը խմբավորվում են՝ որպես «Առաջատար գործ» (Leading Case):

Տրվում են նաև հղումներ՝ կոնկրետ գործի վերաբերյալ կառավարությունների և ՀԿ-ների ներկայացրած բոլոր էական տեղեկանքներին և փաստաթղթերին, ինչպես նաև՝ կոնկրետ գործի վերաբերյալ Նախարարների կոմիտեի կայացրած որոշումներին:

ԷԻՆ-ի աջակիցները.

THE SIGRID RAUSING TRUST

**OPEN SOCIETY
FOUNDATIONS**

The logo for the Oak Foundation features a blue globe icon on the left, followed by the word "OAK" in a large, blue, serif font. Below "OAK" is the word "FOUNDATION" in a smaller, blue, serif font.

ԷԻՆ-ի աջակիցները

CONTACT

EIN Secretariat

contact@einnetwork.org

Postal address:

BP 80007, F- 67015 STRASBOURG

Visitors' address:

2 allée René Cassin, F-67000 STRASBOURG

FOLLOW US

www.einnetwork.org

Twitter:

@EI_Network